Ճանաչի՛ր ինքդ քեզ

Կրթություն

Շաբաթաթերթ «Krtutiun» (education) weekly «Кртутюн» (образование) еженедельник 07.04.2021թ. չորեքշաբթի թիվ 14-15 (987-988)

Սուրբ Զատիկ

Սուրբ Հարության տոն

Ապրիլի 4-ին *Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին* տոնեց **Հիսուս Քրիստոսի հրաշափառ Հարության** տոնը՝ **Սուրբ Զատիկը:** Այն նշվում է գարնանային գիշերահավասարին հաջորդող՝ լուսնի լրման մոտակա կիրակի օրը՝ մարտի 21-ից ապրիլի 26-ն ընկած ժամանակահատվածում:

Սուրբ Հարության տոնը կոչվում է նաեւ **Զատիկ**, որը նշանակում է *զատում, բաժանում, հեռացում* մեղքերից եւ վերադարձ առ **Աստված**: Զատիկը թե՛ *Հին*, եւ թե *Նոր Կտակարաններում* համարվում է մեծագույն տոներից մեկը:

Հիսուս Քրիստոսի խաչելությունից եւ մահվանից հետո՝ երեկոյան, բարեպաշտ մարդիկ Նրա Մարմինն իջեցրին խաչից եւ դրեցին վիմափոր գերեզմանի մեջ՝ փակելով մի մեծ քարով: Երրորդ օրը՝ կիրակի առավոտյան, յուղաբեր կանայք՝ *Մարիամ Մագդաղենացին, Հակոբի* մայրը՝ *Մարիամը* եւ *Սողոմեն*, գնացին գերեզման՝ անուշաբույր յուղերով օծելու **Քրիստոսի** Մարմինը, սակայն զարմանքով տեսան, որ քարայրի մուտքից քարը հեռացված է, իսկ գերեզմանը՝ թափուր: Այդ պահին երեւացին երկու հրեշտակ եւ ասացին. *«Ինչո՞ւ եք ողջին մեռելների մեջ փնտրում: Այստեղ չէ, այլ Հարություն առավ»* (**Ղուկ. ԻԴ 4-9**): *Հարության* լուրը կանայք ավետում են առաքյալներին, որից հետո **Հիսուսը** երեւում է նրանց:

Քրիստոսի *Հարությունը* դարձավ քրիստոնեական վարդապետության եւ հավատի հիմքը: *«Եթե մեռելների հարություն չկա, ապա եւ Քրիստոս Հարություն չի առել: Եվ եթե Քրիստոս Հարություն չի առել, իզուր է մեր քարոզությունը, իզուր է եւ ձեր հավատը»* (**Ա Կորնթ. ԺԵ 13-14**):



Զատկի տոնին մարդիկ *ձու* են ներկում: Ձուն համարվում է *հարության* եւ նոր կյանքի սկզբնավորման խորհրդանիշ: *Կարմիր* գույնը խորհրդանշում է *խաչյալ* ***Հիսուսի*** կենդանարար *Արյունը*, որ թափվեց մեր փրկության համար: *Սուրբ Գրիգոր Տաթեւացին* այդ մասին ասում է. *«Միայն Զատկին ենք ձու ներկում, որովհետեւ ձուն օրինակ է աշխարհի, եւ, ինչպես իմաստուններն են ասում, «դրսի կեղեւը նման է երկնքին, թաղանթը՝ օդին, սպիտակուցը՝ ջրին, դեղնուցն էլ երկիրն է: Իսկ կարմիր գույնը խորհրդանշում է, որ աշխարհը գնվեց Քրիստոսի Արյամբ: Եվ մենք, կարմիր ձուն մեր ձեռքերի մեջ առնելով, հռչակում ենք մեր փրկությունը»»:*

Սուրբ Հարության տոնին նախընթաց երեկոյան եկեղեցիներում մատուցվում է *Ճրագալույցի Սուրբ Պատարագ*, որի ընթացքում պահք պահողները, *Սուրբ Հաղորդություն* ստանալով, դուրս են գալիս պահքից, եւ սկսվում են զատկական տոնակատարությունները: Այդ օրվանից հավատացյալները միմյանց ողջունում են՝ ***«Քրիստոս Յարեաւ ի մեռելոց»*** ավետիսով. պատասխանն է՝ ***«Օրհնեալ է Յարութիւնը Քրիստոսի»***:

Խորհրդարան

Ընդունվել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* ՀՀ օրենքը

ՀՀ ԱԺ յոթերորդ գումարման վեցերորդ նստաշրջանի հերթական նիստում երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ քննարկվել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* եւ կից մի շարք օրենքներում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող օրենսդրական փաթեթն ընդունելու մասին հարցը:

Հիմնական զեկուցող, ՀՀ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** ներկայացրել է այն հիմնական փոփոխությունները, որոնք կատարվել են նախագիծն ԱԺ համապատասխան հանձնաժողովի քննարկմանը վերադարձնելուց հետո:

«Այս ժամանակահատվածն իրապես օգտակար էր, քանի որ օրենքի նախագիծը բավականին բարելավվել է՝ շահագրգիռ կողմերի հետ կազմակերպված քննարկումների արդյունքում: Բավականին արդյունավետ էր Մխիթար Հայրապետյանի նախաձեռնությամբ ԱԺ-ում կայացած ռեկտորների հետ հանդիպումը, որի արդյունքում նախագծում փոխվել են տարբեր ձեւակերպումներ, մասնավորապես՝ ռոտացիայի սկզբունքը, բուհերի ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման դրույթը, որն առավել հստակեցվել է՝ ընդունելի ձեւակերպումներով»,- նշել է նախարարը:

շարունակությունը՝ էջ 4

Ասուլիս

Գործունեության առաջին 100 օրվա ամփոփում

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի պաշտոնավարման առաջին 100 օրվան նվիրված մամուլի ասուլիսի ընթացքում նախարար **Վահրամ Դումանյանն** ամփոփել է այդ ժամանակահատվածում իր գործունեությունը, ինչպես նաեւ անդրադարձել առաջիկա անելիքներին:

Նախարարը ներկայացրել է գերատեսչության գործունեության առանցքային ուղղությունները՝ շեշտելով, որ ԿԳՄՍ նախարարության ենթակա ոլորտներն առնչվում են մեր հասարակության գրեթե բոլոր շերտերին:

շարունակությունը՝ էջ 3

Դիմորդ 2021

Մեկ բուհ, մեկ մասնագիտություն

Բուհերի դիմորդներն այս տարի ընդունելության հայտագրման առաջին փուլում կընտրեն մեկ բուհ՝ մեկ մասնագիտություն, անվճար եւ վճարովի համակարգերը միաժամանակ: Կառավարությունն ապրիլի 1-ի նիստում հաստատել է բուհերի ընդունելության կարգում փոփոխություն կատարելու մասին որոշումը: Նախագիծը ներկայացնող՝ ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** նշել է, որ նոր կարգում կատարված հիմնական փոփոխությունները վերաբերում են ընդունելության քննությունների եւ մասնագիտությունների հայտագրմանը, ժամկետներին եւ ձեւաչափին:

Ըստ այդմ՝ ընդունելության հայտագրումը կկատարվի երկու փուլով, էլեկտրոնային՝ առցանց եղանակով: Հիմնական կամ առաջին փուլում դիմորդները հնարավորություն կունենան ընտրելու միայն մեկ բուհի մեկ մասնագիտություն՝ ի տարբերություն նախկինի, երբ դիմորդը կարող էր հայտագրել մինչեւ 2 անվճար եւ մինչեւ 8 վճարովի մասնագիտություն: Սա կարգում կատարված ամենալուրջ փոփոխությունն է:

շարունակությունը՝ էջ 5

Ավետումն Մարիամ Աստվածածնի

Եղիսաբեթի հղիության վեցերորդ ամսում **Աստված Գաբրիել** հրեշտակին ուղարկեց *Գալիլեայի Նազարեթ* քաղաքում գտնվող մի կույսի մոտ: Կույսի անունը **Մարիամ** էր: Նա նշանված էր **Հովսեփ** անունով մի մարդու հետ: **Մարիամը** աստվածավախ էր ու համեստ:

Հրեշտակը, մոտենալով նրան, ասաց. *«Ուրախացի՛ր, շնորհալի՛ կույս, որովհետեւ բոլոր կանանցից **Աստված** ընտրել եւ օրհնել է քեզ»*:

Այս խոսքերը լսելով՝ **Մարիամը** շփոթվեց: Տեսնելով **Մարիամի** շփոթությունը՝ **հրեշտակն** ասաց. *«Մի՛ վախեցիր, **Մարիա՛մ**, որովհետեւ **Աստծու** շնորհը ստացար: Դու ահա կհղիանաս եւ որդի կծնես եւ նրա անունը **Հիսուս** կդնես»*:

Մարիամը շատ զարմացավ, որովհետեւ ամուսնացած չէր:

Հրեշտակն այսպես բացատրեց. *«**Սուրբ Հոգին** կգա քեզ վրա, եւ **Բարձրյալ Աստծու** զորությունը քեզ հետ կլինի, որովհետեւ մանուկը, որ քեզնից է ծնվելու, սուրբ է եւ **Աստծու Որդի** կկոչվի: Քո ազգական Եղիսաբեթն արդեն ծերացել է եւ երեխա ունենալ չի կարող, բայց արդեն վեցերորդ ամիսն է, որ հղի է: Իմացի՛ր, որ **Աստծու** համար անկարելի ոչինչ չկա»*:

Մարիամն ասաց. *«Ես **Աստծու** աղախինն եմ, եւ թող կատարվի այն, ինչ դու ասացիր»*:

Հրեշտակն անհետացավ:

Մի քանի օր անց **Մարիամը** շտապելով գնաց *Հուդայի* երկրի քաղաքներից մեկը, մտավ **Զաքարիայի** տունը եւ ողջունեց նրա կնոջը՝ Եղիսաբեթին:

Երբ Եղիսաբեթը լսեց **Մարիամի** ողջույնը, նրա որովայնի մեջ շարժվեց մանուկը: Եղիսաբեթը, **Սուրբ Հոգուց** ներշնչված, բարձրաձայն ասաց **Մարիամին**. *«Բոլոր կանանցից **Աստված** քեզ է ընտրել եւ օրհնել է նաեւ այն զավակին, որ դու ես ծնելու: Ինձ համար մեծ երջանկություն է, որ **Տիրոջ** մայրն այցելում է ինձ: Երանի՜ քեզ, որ հավատացիր, որովհետեւ **Աստծո** կողմից քեզ ասված խոսքերը պիտի կատարվեն»*:

Մարիամը շուրջ երեք ամիս մնաց Եղիսաբեթի մոտ, ապա վերադարձավ տուն:

Ըստ Ղուկասի Ավետարանի

Մարիամ Աստվածածնի ***ավետման*** *օրը՝* **Ապրիլի 7-ը**, մեզանում նշվում է՝ որպես ***Մայրության եւ գեղեցկության տոն:***

տե՛ս՝ նաեւ էջ 11-14

Հետպատերազմյան

Փոխհատուցում կստանա մասնակից 7000 ուսանող

ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ պետական բյուջեից հատկացվել է 590 մլն 440 հազար դրամ՝ 2020 թվականի Արցախյան պատերազմի մասնակիցներին, նրանց զավակներին, կնոջը կամ ամուսնուն՝ ուսման վարձի փոխհատուցում տրամադրելու նպատակով:

ԿԳՄՍ նախարար **Վահրամ Դումանյանը** նախագիծը ներկայացնելիս տեղեկացրել է, որ համաձայն որոշման՝ մեկ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցում կստանան եւս 2840 ուսանողներ, որոնցից 2651-ը՝ բարձրագույն, 189-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորող: Նախարարի խոսքով՝ նշված որոշման շրջանակում փոխհատուցումից կօգտվեն ԲՈՒՀ-երի եւ ՄՄԿՈՒ հաստատությունների կողմից հավաքագրված եւ 2021 թվականի փետրվարի 10-ի դրությամբ ԿԳՄՍ նախարարություն ներկայացված շահառուները: Վահրամ Դումանյանը նաեւ հիշեցրել է, որ մինչ այդ՝ 2021 թվականի փետրվարի 4-ի նիստում Կառավարությունը որոշում էր կայացրել մինչեւ 2020 թվականի դեկտեմբերի 30-ը բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատություններից ԿԳՄՍ նախարարություն ներկայացված շահառուների քանակով ուսման վարձի փոխհատուցում հատկացնել 1373 ուսանողի, որոնցից 1303-ը՝ բուհերի, իսկ 70-ը՝ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորող: Այդ նպատակով հատկացվել էր 304 մլն 960 հազար դրամ: Ընդ որում, շահառուների 57,5 % պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակիցներ են, 34,2 % պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց երեխաներ են, իսկ 8,4 % պատերազմի ընթացքում մարտական գործողությունների մասնակից անձանց ամուսիններ են (կանայք):

Վերոնշյալ երկու որոշումներով, ընդհանուր առմամբ, Կառավարությունն արդեն հատկացրել է շուրջ 895 մլն 400 հազար դրամ գումար, որով 4213 ուսանողի կտրվի մեկ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցում: Վահրամ Դումանյանի տեղեկացմամբ՝ ծրագրում ընդգրկված շահառուների 82 տոկոսը ՀՀ պետական բարձրագույն եւ միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների սովորողներ են, 18 տոկոսը՝ ոչ պետական հաստատությունների ուսանող: Ընդհանուր առմամբ պատերազմի մասնակիցներին ուսման վարձի փոխհատուցման սոցիալական ծրագրի պոտենցիալ շահառուների թիվը հասնում է մոտ 7 հազարի: 2020 թ.-ի Արցախյան պատերազմի մասնակից ուսանողներին եւ մարտական գործողությունների մասնակիցների ուսանող զավակներին, կնոջը կամ ամուսնուն տրվող՝ մեկ կիսամյակի ուսման վարձի փոխհատուցման գործընթացը շարունակական է:

Ներկայումս արդեն ամփոփվել են եւս 1905 ուսանողների տվյալները: Նրանց 1 կիսամյակի ուսման վարձի փոխհատուցման չափը կազմում է շուրջ 408 մլն 989 հազար դրամ: Կառավարության համապատասխան որոշումները կկայացվեն առաջիկայում:

Նշենք, որ ծրագրի շահառու կարող է հանդիսանալ առկա եւ հեռակա ուսուցմամբ վճարովի համակարգում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների, բուհերի՝ բակալավրիատի, մագիստրատուրայի, ասպիրանտուրայի եւ կլինիկական օրդինատուրայի սովորողը, եթե նա անձամբ կամ նրա ծնողը, ամուսինը մասնակցել են մարտական գործողություններին:

Մարտական գործողություններին մասնակցությունը հավաստվում է Պաշտպանության նախարարության զորակոչային եւ զորահավաքային համալրման ծառայության կամ քաղաքացու զինվորական հաշվառման վայրի տարածքային ստորաբաժանման (զինվորական կոմիսարիատ) կողմից տրամադրված տեղեկանքի միջոցով կամ զինվորական հաշվառման գրքույկում համապատասխան նշմամբ: Ծրագրից օգտվելու համար անհրաժեշտ է բուհին ներկայացնել անձը հաստատող փաստաթուղթ, Զինված ուժերի կազմում մարտական գործողություններին մասնակցությունը հավաստող փաստաթուղթ: Ըստ անհրաժեշտության՝ բուհը կարող է պահանջել նաեւ լրացուցիչ փաստաթղթեր:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ասուլիս

Գործունեության առաջին 100 օրվա ամփոփում

սկիզբը՝ էջ 1

«Գրեթե չկա մի ընտանիք, որի անդամներից գոնե մեկը չառնչվի հանրակրթության կամ բարձրագույն կրթության, գիտության, մշակույթի, սպորտի կամ երիտասարդության բնագավառներին: Ըստ այդմ՝ բավականին ժամանակատար կլինի մեկ ասուլիսի ընթացքում ներկայացնել իմ հարյուրօրյա պաշտոնավարման արդյունքները, ինչպես նաեւ ուրվագծել առաջիկա գործունեության ուղղություններ»,- նշել է նախարարը՝ անդրադառնալով ռազմավարական նշանակություն ունեցող արդյունքներին եւ առաջիկա առանցքային ծրագրերին:

Ըստ Վահրամ Դումանյանի՝ ներկայում վերանայման փուլում է *«Կրթության զարգացման 2021-2025 թվականների ռազմավարությունը»*, որի աշխատանքներն առկախվել էին պատերազմի պատճառով: Միջազգային գործընկերների, այդ թվում Ասիական զարգացման բանկի եւ Յունիսեֆի փորձագիտական աջակցության շնորհիվ փաստաթղթի գործունեության պլանը ներառում է ինչպես ֆինանսական գնահատական, այնպես էլ գործողությունների հստակ ժամանակացույց՝ մշտադիտարկման եւ գնահատման պլանով:

Նախարարի ասուլիսին մասնակցել են նախարարի տեղակալներ **Ժաննա Անդրեասյանը, Կարեն Թռչունյանը, Արթուր Մարտիրոսյանը, Արա Խզմալյանը, Կարեն Գիլոյանը** եւ Լեզվի կոմիտեի նախագահ **Դավիթ Գյուրջինյանը**: Պաշտոնական հաշվետվության ներկայացումից հետո նրանք պատասխանել են լրագրողների հարցերին:

Ակադեմիական քաղաք. առայժմ միայն գաղափար

Նախարար Վահրամ Դումանյանը, անդրադառնալով ՀՀ վարչապետի *«Ակադեմիական քաղաք»* ստեղծելու գաղափարի վերաբերյալ հայտարարությանը, վստահեցրել է, որ բուհերի շենքային կառույցներին որեւէ վտանգ չի սպառնում, եւ դրանք վաճառելու որոշում չկա, ընդամենն այդպիսի քաղաք ստեղծելու գաղափար է շրջանառվում:

«Հերքում եմ այն պնդումը, որ կա բուհերի շենքերը վաճառելու որոշում: Առավել եւս՝ չի կարող գոյություն ունենալ ԵՊՀ-ի շենքը վաճառելու որոշում: Մայր բուհի շենքն արդեն որոշ «ստեղծարարներ» դարձրել են ցերեկային առեւտրի սրահ: Սա անհարգալից վերաբերմունք է մեր պետականության, մեր ժողովրդի հանդեպ»,- նշել է նախարարը՝ փաստելով, որ այսօր բազմաթիվ այն դեպքերը, երբ բուհերը չեն ապահովում սանիտարահիգիենիկ, լսարանային մակերեսների, դասախոսություններ եւ սեմինարներ կազմակերպելու տեխնիկական հագեցվածության, հանրակացարանային, մարզական եւ սննդի մատուցման ժամանակակից պայմաններ, այսինքն՝ չկա համալիր մոտեցում:

«Եթե իրականություն դառնա ակադեմիական քաղաքի գաղափարը, եւ ունենանք մեր երազած ստեղծագործական միջավայրը, ապա շատ բուհերի մոտ բնական ցանկություն կառաջանա տեղափոխվել այդ վայր: Եվ այն կառույցները, որտեղ այլեւս նպատակահարմար չի համարվի բարձրագույն կրթություն իրականացնել, հնարավոր է՝ վաճառվեն, եւ այդ գումարը ներդրվի տվյալ քաղաքի զարգացման գործում: Սակայն, որպեսզի այդ գաղափարն իրականություն դառնա, լրջագույն ներդրումներ են անհրաժեշտ, քանի որ, եթե անգամ բոլոր բուհերի շենքերն էլ վաճառվեն, ապա այդ գումարը չի բավականացնի: Եվ այստեղ հարց է առաջանում՝ որքանո՞վ է այդ գաղափարն իրատեսական, քանի որ այս հարցում, իհարկե, քաղաքական կամքը եւ հաստատակամությունը կարեւոր են ու անհրաժեշտ, բայց՝ ոչ բավարար պայման, քանի որ նշված գործընթացում ամենակարեւորը համապատասխան ֆինանսական միջոցների առկայությունն է»,- ընդգծել է Վահրամ Դումանյանը:

Պոլիտեխնիկի ռեկտորի ընտրության մասին

Պատասխանելով Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարանի ռեկտորի ընտրությունների վերաբերյալ հարցին, նախարարն ասել է, որ բուհի ռեկտորի ժամանակավոր պաշտոնակատարը ներկայում իրականացնում է իր գործառույթները: Նրա խոսքով՝ ՀՀ կառավարությունը դեռեւս չի հաստատել ռեկտորի ընտրության արդյունքները. կա հստակ իրավական գործընթաց եւ սահմանված կարգին համապատասխանություն:

2 մլրդ դրամով ավելացել է գիտության ֆինանսավորումը

Վահրամ Դումանյանը գոհունակություն է հայտնել այն փաստի կապակցությամբ, որ կառավարությունը որոշել է 2 մլրդ դրամով այս տարի ավելացնել Գիտպետկոմի բյուջեն եւ նոր ծրագրեր իրականացնել *«Պատերազմից հետո բյուջեի վերանայում եղավ գրեթե բոլոր ուղղություններով, սակայն մենք առաջարկել էինք գիտության ոլորտի բյուջեից որեւէ ծախս չպակասեցնել, այլ ընդհակառակը՝ ավելացնել, որի արդյունքում էլ նման որոշում է կայացվել:* ***Սա ցույց է տալիս գիտության ոլորտի կարեւորությունը ՀՀ կառավարության համար: Իհարկե, 2 մլրդ դրամը բավարար չէ, եւ Կառավարությունը նպատակադրվել է հաջորդ տարի շուրջ 5 մլրդ դրամի ավելացում եւս անել: Սակայն, միայն գումար ավելացնելով՝ խնդիրը չի լուծվում, քանի որ շատ հաճախ դրանք ուղղակի փոշիանում են: Գիտության զարգացման համար պետք է լինեն հստակ վերջնարդյունքի ակնկալիք եւ իրականացված աշխատանքի չափելիություն»***:

Դպրոցի տնօրենի ընտրության նոր կարգ

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը հայտարարել է, որ դպրոցների կառավարման խորհուրդների ձեւավորման նոր սկզբունքների ու տնօրենի ընտրության նոր կարգի նպատակն է հստակեցնել տնօրենի ընտրության գործընթացը: Ըստ նոր կարգի՝ դպրոցների կառավարման խորհուրդների 9 անդամից 5-ին նշանակում է պետական կառավարման լիազոր մարմինը, այսինքն՝ ավագ դպրոցների դեպքում ԿԳՄՍ նախարարությունը, մարզային եւ Երեւանի քաղաքապետարանի ենթակայությամբ դպրոցների դեպքում՝ համապատասխան մարզպետարանը եւ Երեւանի քաղաքապետարանը: Մնացած 4 անդամները ծնողական եւ մանկավարժական համայնքների ներկայացուցիչներն են: Արձագանքելով լրագրողի դիտարկմանը, թե պետական կառույցները դպրոցների կառավարման խորհուրդներում ձայների մեծամասնություն ունեն եւ կարող են միանշանակ որոշել, թե ով դառնա ուսումնական հաստատության ղեկավար, Վ. Դումանյանը պարզաբանել է. *«Չնայած կառավարման խորհուրդներում այսօր ունենք 5+4 ձեւաչափը, սակայն տնօրենի ընտրության համար անհրաժեշտ են առնվազն 6 «կողմ» ձայներ: Այսինքն՝ միայն նախարարության կամ մարզպետարանի (Երեւանի քաղաքապետարանի) ներկայացուցիչների ձայներով տնօրեն ընտրվել հնարավոր չէ»*:

Նրա խոսքով՝ տնօրենի ընտրության կարգը փոխելու հիմնական պատճառն այն է, որ նախկին կարգից դժգոհ էին բոլորը՝ եւ՛ ծնողները, եւ՛ ուսուցիչները, եւ՛ նախարարությունը: Մասնավորապես, երբ տնօրենի ընտրության ժամանակ կառավարման խորհրդի 8 ձայները բաժանվում էին երկու հավասար մասի, եւ հաղթող չէր ճանաչվում, նախարարն ավագ դպրոցների դեպքում, իսկ փոխվարչապետը մարզային դպրոցների եւ Երեւանի քաղաքապետարանին ենթակա դպրոցների դեպքում պարտավոր էին նշանակել տնօրեն՝ նախապատվությունը տալով հավասար ձայներ ստացած երկու թեկնածուներից մեկին:

շարունակությունը՝ էջ 6

Նախարարի հրամանով

905 848 դասագիրք՝ բյուջեի հաշվին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատվել է *«Հայաստանի Հանրապետության 2021 թվականի պետական բյուջեի մասին»* օրենքի բյուջետային ծախսերի *«Կրթական հաստատությունների աշակերտներին դասագրքերով եւ ուսումնական գրականությամբ ապահովում»* միջոցառման շրջանակում դասագրքերի ձեռքբերման ցանկը:

Ըստ այդմ՝ հաստատվել են տարրական դասարանների 38 անուն դասագիրք, վարժությունների եւ աշխատանքային տետրեր: Նախարարի հրամանով հաստատվել է նաեւ ազգային փոքրամասնությունների համար նախատեսված 10 անուն դասագիրք, մասնավորապես՝ *«Եզդիերեն այբբենարան» «Քրդերեն այբբենարան», «Եզդի գրականություն», «Եզդիերեն»* եւ *«Քրդերեն»*:

Ձեռք կբերվի 905 848 դասագիրք, վարժությունների եւ աշխատանքային տետրեր, որոնց տարեկան ընդհանուր գումարը կազմում է 919 170 109 ՀՀ դրամ:

Դասագրքերը տպագրելու են *«Էդիթ Պրինտ», «ՄԱՆՄԱՐ», «Արեւիկ», «Զանգակ-97», «Տիգրան Մեծ», «Աստղիկ գրատուն», «ՍՊԻԿԱ»* հրատարակչությունները եւ *«Հայաստանի շախմատի ակադեմիա»* հիմնադրամը:

ՀՀ ԿԳՄՍ նախարարի հրամանով հաստատվել է նաեւ 2021-2022 ուստարում հանրակրթական ծրագրեր իրականացնող հաստատություններում գործածության երաշխավորված դասագրքերի ցանկը:

Ըստ այդմ՝ 1-ին դասարանում երաշխավորվել է 14, 2-րդ դասարանում՝ 24, 3-րդում՝ 32, 4-րդում՝ 36, 5-րդում՝ 19, 6-րդում՝ 24, 7-րդում՝ 29, 8-րդում՝ 31, 9-րդում՝ 32, 10-րդում՝ 33, 11-րդում՝ 34, 12-րդում՝ 28 անուն դասագիրք: Երաշխավորված դասագրքերի ցանկում են նաեւ ազգային փոքրամասնությունների համար նախատեսված դասագրքերը:

2021 թվականին վերահրատարակվելու են 1-ին դասարանի *«Այբբենարանը», «Եզդիերեն այբբենարանը», «Քրդերենի այբբենարանը»*, ինչպես նաեւ *«Մայրենի», «Մաթեմատիկա», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա»* առարկաների դասագրքերը: Վերահրատարակվելու են նաեւ 2-րդ դասարանի *«Ռուսաց լեզու», «Երաժշտություն», «Շախմատ», «Ֆիզկուլտուրա»*, 3-րդ դասարանի *«Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես եւ շրջակա աշխարհը», «Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն», «Կերպարվեստ», «Տեխնոլոգիա»*, 4-րդ դասարանի *«Մայրենի», «Մաթեմատիկա», «Ես եւ շրջակա աշխարհը»*, 6-րդ դասարանի *«Երաժշտություն»*, 7-րդ դասարանի *«Հայոց լեզու», «Գրականություն», «Հանրահաշիվ», «Երկրաչափություն», «Ինֆորմատիկա», «Տեխնոլոգիա»*, 9-րդ դասարանի *«Անգլերեն», «Ֆրանսերեն», «Գերմաներեն»*, 10-րդ դասարանի *«Հայոց լեզու», «Հայ գրականություն», «Հայոց պատմություն», «Հայոց եկեղեցու պատմություն»* եւ *«Հասարակագիտություն»* առարկաների դասագրքերը:

Հ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Նախարարի հրամանով

Առանձին եւ միացյալ խորհուրդներ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարար **Վահրամ Դումանյանի** հրամանով հաստատվել է պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների կառավարման խորհուրդների ձեւավորման նոր կարգը, որն ուժի մեջ կմտնի 2021 թվականի ապրիլի 1-ից:

Նոր կարգով՝ դպրոցների կառավարման խորհուրդների համակարգում կտրուկ փոփոխություն է նախատեսվում: Մասնավորապես՝ ներմուծվում է դպրոցների միացյալ եւ առանձին խորհուրդների գաղափարը, որը նոր մոտեցում է: Համաձայն կարգի՝ հանրակրթական ուսումնական հաստատության խորհուրդը ձեւավորվում է 3 տարի ժամկետով՝ իբրեւ **առանձին** հաստատության խորհուրդ՝ առնվազն 3000 բնակչություն ունեցող բնակավայրերում գործող դպրոցների դեպքում, իբրեւ **միացյալ** խորհուրդ՝ առավելագույնը երեք հաստատության համար: Առանձին խորհուրդը կազմվում է 9 անդամից, միացյալ խորհուրդը կարող է ունենալ առավելագույնը 19 անդամ:

Խորհրդի անդամներին առաջադրում են ՀՀ ԿԳՄՍ նախարարը, լիազորված մարմինը (մարզպետարաններ, Երեւանի քաղաքապետարան), մանկավարժական եւ ծնողական խորհուրդները, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը:

Մարզպետարանների եւ Երեւանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների առանձին խորհուրդներում ԿԳՄՍ նախարարն առաջադրում է մեկական, միացյալ խորհուրդներում՝ երկուական անդամ:

ԿԳՄՍ նախարարության ենթակայության հաստատություններում 4 անդամ առաջադրում է ԿԳՄՍ նախարարը, 1-ական անդամ՝ ՀՀ մարզերում համապատասխան մարզպետը, մայրաքաղաքում՝ Երեւանի քաղաքապետը:

Մարզային ենթակայության հաստատությունների առանձին խորհուրդներում մարզպետն առաջադրում է խորհրդի 4 անդամ, որից երկուսին ներկայացնում է տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարը: Միացյալ խորհուրդներում մարզպետն առաջադրում է 5 անդամ, ընդ որում՝ կախված ուսումնական հաստատությունների թվից, մեկական անդամ ներկայացնում են տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարները:

Երեւանի քաղաքապետարանի ենթակայության դպրոցների խորհուրդներում Երեւանի քաղաքապետն առաջադրում է 4 անդամ:

Դպրոցի մանկավարժական եւ ծնողական խորհուրդներն իրենց կազմից փակ քվեարկությամբ ընտրում են խորհրդի 2-ական անդամ, ընդ որում՝ նույն անձը խորհրդի կազմում չի կարող ընդգրկվել 2 անգամ անընդմեջ:

Կառավարման խորհրդի կազմում նախարարի, լիազորված մարմնի, տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի եւ ծնողական խորհրդի կողմից չի կարող առաջադրվել այն անձը, որը միաժամանակ հանդիսանում է տվյալ ուսհաստատության աշխատակից: Հանրակրթական դպրոցի տնօրենը եւս չի կարող լինել խորհրդի կազմում:

ԿԳՄՍ նախարարությունը, մարզպետը եւ Երեւանի քաղաքապետն ուսումնական հաստատության հիմնադրման կամ խորհրդի ձեւավորման կարգի փոփոխման դեպքերում 30-օրյա ժամկետում, ըստ ենթակայության, կազմակերպում եւ ապահովում են կոլեգիալ կառավարման մարմնի՝ խորհրդի անդամների ընտրություն: Խորհրդի առաջին նիստը վարում է տարիքով ավագ անդամը: Խորհրդի նախագահն ընտրվում է փակ քվեարկությամբ՝ անդամների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Նիստերն արձանագրում է խորհրդի նախագահի կողմից առաջադրված եւ ձայների պարզ մեծամասնությամբ ընտրված քարտուղարը:

Խորհրդի անդամի պարտավորությունները, լիազորությունները եւ դրանց դադարեցման հիմքերը սահմանվում են *«Հանրակրթության մասին»* ՀՀ օրենքով:

Հավելենք, որ դպրոցի կառավարման խորհրդի կարեւոր գործառույթներից են հաստատության տնօրենի ընտրությունը, ինչպես նաեւ հաստիքային եւ տարիֆիկացիոն ցուցակների, դպրոցի ծախսերի նախահաշվի եւ բյուջեի հաստատումը:

Կ. ՄԱՆՈՒԿՅԱՆ

Ընդունվել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* ՀՀ օրենքը

սկիզբը՝ էջ 1

Վահրամ Դումանյանի խոսքով՝ հաշվի առնելով մի շարք կարծիքներ՝ էական փոփոխություն է տեղի ունեցել ռեկտորների ընտրության եւ նշանակման հարցում: Ընտրանքային տարբերակը փոխարինվել է ընտրության սկզբունքով. ներկա տարբերակում ռեկտորը կընտրվի կառավարման խորհրդում եւ կհրամանագրվի 5 տարի ժամկետով: Հաջորդ կարեւոր փոփոխությունը, ըստ հիմնական զեկուցողի, այն է, որ եթե նախորդ տարբերակում առաջարկվում էր, որ բուհի ռեկտորին ներկայացվող պահանջները կսահմանվեն տվյալ բուհի կանոնադրությամբ, իսկ օրենքում կամրագրվի միայն գիտական աստիճանի առկայության պահանջը, ապա ներկայացված առաջարկների հիման վրա նախագծում կատարվել է փոփոխություն եւ սահմանվել, որ օրենքում, գիտական աստիճանից զատ, պահանջ դրվի նաեւ 5 տարվա գիտական եւ ակադեմիական գործունեության ստաժի առկայության հարցը:

Ըստ Վահրամ Դումանյանի՝ ամբիոնի վարիչն այլեւս կհամարվի ակադեմիական պաշտոն, կփոխվի նաեւ ռեկտորի համար սահմանված տարիքային շեմը՝ այն 65-ից դարձնելով 70: Եթե գործող օրենքով խորհուրդներում ուսանողների թիվը 25 տոկոս է, ապա նախագծով այն սահմանվում է մինչեւ 25 տոկոս:

Նախարարն անդրադարձել է նաեւ հաջորդ կարեւոր փոփոխությանը, այն է՝ բուհերի հավատարմագրման գործընթացին. *«Հավատարմագրման դրույթներում հստակ ամրագրվել են անցումային ժամկետները եւ մեխանիզմները: Այն բուհերին, որոնք ներկայում չունեն ինստիտուցիոնալ հավատարմագրում, իսկ ոչ պետական բուհերի թիվը բավականին մեծ է (պետական բոլոր բուհերը որոշակի ժամկետով ունեն այդ հավատարմագրումը), մինչեւ 2023 թվականի նոյեմբերի 1-ը տրվել է ժամկետ՝ այդ գործընթացն անցնելու համար: Հակառակ պարագայում՝ այդ պահից սկսած նշված բուհերն այլեւս չեն կարող կազմակերպել ընդունելության գործընթաց: Բուհերն ինստիտուցիոնալ հավատարմագրման դեպքում կարող են սեփական որակի կենտրոնների միջոցով իրականացնել ծրագրային հավատարմագրում: 2027 թվականից սկսած ինստիտուցիոնալ հավատարմագրման անցնելու գործընթացի հետ միաժամանակ դրանք կանցնեն նաեւ ծրագրային հավատարմագրում, սակայն՝ արդեն արտաքին: Եթե բուհերին տրվել է ինստիտուցիոնալ հավատարմագրում մինչեւ 2022 եւ 2023 թթ.-ը, ապա այդ ժամկետն ավտոմատ կերկարաձգվի մինչեւ 2025 թվականի հունվարի մեկը, որպեսզի մինչ այդ դրանք ծրագրային հավատարմագրում անցնեն սեփական կենտրոնի միջոցով: Դրանից հետո այլեւս բոլոր բուհերը, անկախ դրանց իրավակազմակերպական ձեւից, պետք է անցնեն ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրում ու աշխատեն նույն կանոններով»*:

Նախագծում, գիտական աստիճանից զատ, բուհի ռեկտորին ներկայացվող պահանջ է դրվում 5 տարվա գիտական եւ ակադեմիական գործունեության ստաժի առկայությունը:

Նախարարի ելույթից հետո հնչել են հարցեր: *«Լուսավոր Հայաստան»* խմբակցության պատգամավոր **Սրբուհի Գրիգորյանին** հետաքրքրել է, թե ինչպես է պետությունը պատրաստվում լուծել մարզային բուհերում որակյալ մասնագետների բացակայության խնդիրը: Ի պատասխան՝ Վահրամ Դումանյանը նշել է, որ այդ խնդրի լուծմանն է ուղղված, այդ թվում՝ մարզային բուհերի ինստիտուցիոնալ եւ ծրագրային հավատարմագրման գործընթացի փոփոխությունը. *«Հուսով եմ, որ դրա արդյունքում բոլոր բուհերը կունենան անհրաժեշտ կադրային բազա, որպեսզի հավուր պատշաճի կատարեն իրենց աշխատանքը: Բուհում աշխատելը պետք է լինի գրավիչ, եւ դրան են միտված կառավարման համակարգի ձեւավորման նոր մոտեցումները»*:

Պատգամավոր **Թագուհի Թովմասյանը** նշել է, որ ռեկտորների խորհուրդն իր անհամաձայնությունն է հայտնել նախագծով սահմանված կառավարման խորհուրդների ձեւավորման դրույթին՝ շեշտելով, որ այն հակասում է բուհական ինքնավարության սկզբունքին:

«Ափսոսում եմ, որ ներկա չէիք ռեկտորների հետ հանդիպմանը, որը, թերեւս, ամենաբովանդակալից քննարկումն էր այս ողջ ընթացքում: Ակադեմիական ինքնավարության սկզբունքը շատ կարեւոր է, բայց նաեւ պետությունը պետք է որոշակի վերահսկողություն եւ պատասխանատվություն ստանձնի այս գործընթացում»,- փաստել է Վահրամ Դումանյանը:

Հարակից զեկուցող, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի նախագահի տեղակալ **Հովհաննես Հովհաննիսյանը** շնորհակալություն է հայտնել այս տարիների ընթացքում օրենքի նախագիծը մշակած բոլոր կողմերին եւ անհատներին: Նրա խոսքով՝ վերջին երկու շաբաթվա ընթացքում նախագծում կատարվել են բավականին կարեւոր փոփոխություններ, եւ փոխհամաձայնության արդյունքում ռեկտորների մի շարք առաջարկներ ներառվել են նախագծում: Նա հույս է հայտնել, որ օրենքի նախագծով ամրագրված ուսանողական միավորումներն այլեւս կբացառեն բուհերի կուսակցականացման արատավոր գործընթացը:

Զեկույցներին հաջորդել է մտքերի փոխանակությունը. նախագծի վերաբերյալ հնչել են շուրջ մեկ տասնյակ ելույթներ: Անդրադարձ է կատարվել ռեկտորի ընտրության եւ նշանակման, ռոտացիայի սկզբունքների, վարչական պաշտոնների տարիքային շեմի սահմանափակման, հավատարմագրման ժամկետների, բուհերի արհմիությունների, գիտության ֆինանսավորման, բուհերի ակադեմիական ինքնավարության, պետության վերահսկողական մեխանիզմների, կառավարման խորհուրդների ձեւավորման եւ այլ հարցերի:

Եզրափակիչ ելույթում նախարար Վահրամ Դումանյանը շնորհակալություն է հայտնել ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամներին, ռեկտորներին եւ բոլոր շահագրգիռ կողմերին՝ առաջարկությունների եւ դիտողությունների համար:

«Շնորհակալ եմ բոլոր այն մարդկանց, ովքեր գեթ մեկ անգամ օրենքի նախագիծը կարդացել են եւ հանդես եկել համապատասխան առաջարկություններով: Շնորհակալ եմ նաեւ այն պատգամավորներին, որոնք այսօրվա ելույթներում դեմ են արտահայտվել նախագծին: Իհարկե, գուցե մենք մնացինք տրամագծորեն տարբեր բեւեռներում, սակայն կարեւորն այն է, որ նրանց ելույթները նվիրված էին բուն նախագծին»,- նշել է նախարարը՝ վստահեցնելով, որ *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* օրենքի նախագծի ընդունումը կնպաստի Հայաստանի կրթության եւ գիտության ոլորտի զարգացմանը:

Արդյունքում՝ ՀՀ ԱԺ-ն երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունվել է *«Բարձրագույն կրթության եւ գիտության մասին»* եւ կից մի շարք օրենքներում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող օրենսդրական փաթեթը: Նախագծին կողմ է քվեարկել 79 պատգամավոր, դեմ՝ 36, ձեռնպահ՝ 2:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Համագործակցություն

Դրամաշնորհային նոր ծրագրեր

Ճապոնիայի կառավարությունը դրամաշնորհային աջակցության երկու ծրագրեր կիրականացնի Մարգահովիտ եւ Նոյեմբերյան համայնքներում: Այդ նպատակով ԿԳՄՍ նախարարությունում տեղի է ունեցել դրամաշնորհների պայմանագրերի ստորագրման արարողություն: Պայմանագրերը ստորագրել են ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան **Ջուն Յամադան**, *«Մարգահովիտի երիտասարդական կենտրոն»* ՀԿ-ի տնօրեն **Էմիլիա Մարտիրոսյանը** եւ Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ **Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստանյանը**:

Միջոցառմանը ողջույնի խոսքով հանդես է եկել ԿԳՄՍ նախարարի տեղակալ **Արթուր Մարտիրոսյանը**՝ ընդգծելով, որ երկու նախաձեռնություններն էլ կարեւոր են տարածքային համաչափ զարգացման, մարզերում աղքատության հաղթահարման, ՀՀ գյուղական եւ մարզային համայնքներում կրթական հնարավորությունների ու սոցիալական ծառայությունների ընդլայնման, մարզական կյանքի աշխուժացման տեսանկյունից: Դրանք, ըստ փոխնախարարի, ՀՀ կառավարության որդեգրած մոտեցումներն են: *«Հաջորդ կարեւոր գործոնն այն է, որ Ճապոնիայի կառավարությունը շարունակական աջակցություն է տրամադրում մեր երկրին: Հատկանշական է նաեւ, որ նախաձեռնությունների կրողը տեղի կառույցներն են: Մարգահովիտում իրականացվելիք ծրագրի միջոցով կաշխուժանա ոչ միայն տվյալ համայնքի, այլեւ հարակից համայնքների կյանքը: Նոյեմբերյանում իրականացվելիք ծրագրի նախաձեռնությունը պատկանում է Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդարանին: Այս ծրագիրը կարեւոր է սոցիալական ծառայությունների տրամադրման, կանանց աշխատանքի տեղավորման հեռանկարների, ինչպես նաեւ լրացուցիչ եւ շարունակական, մասնավորապես, արհեստագործական կրթության ընդլայնման տեսանկյունից, որի շնորհիվ երիտասարդները հնարավորություն կունենան ստանալու համապատասխան հմտություններ եւ աշխատանք գտնելով հայրենի մարզում՝ արարել, ստեղծագործել ու ամրացնել այն»*,- նշել է Արթուր Մարտիրոսյանը եւ հավելել, որ ԿԳՄՍ նախարարությունը մշտապես պատրաստակամ է հնարավորինս աջակցել նախագծերի հաջող իրականացմանը:

ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան Ջուն Յամադան իր հերթին ընդգծել է, որ երկու ծրագրերը կիսում են մեկ ընդհանուր նպատակ՝ աջակցել մարդկանց կյանքի բարելավմանը, որն անչափ կարեւորում է Ճապոնիայի կառավարությունը: *«Հույս ունեմ, որ այս երկու ծրագրերը կմարմնավորեն մեր երկու երկրների միջեւ բարեկամությունը եւ հարաբերությունների ամրապնդումը»*,- նշել է դեսպանը՝ հաջողություն մաղթելով նախագծերում ներգրավված բոլոր կողմերին:

Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմի առաջնորդ Տեր Բագրատ եպիսկոպոս Գալստյանն ասել է, որ սա երկրորդ նմանօրինակ նախաձեռնությունն է Տավուշի մարզում. առաջինն Իջեւանի կենտրոնն է, որը բավականին հաջողություններ է գրանցել, եւ այդ գործընթացում մեծ մասնակցություն ունի Ճապոնիայի դեսպանությունը:

«Այս նախաձեռնության շնորհիվ՝ իրականանում է մի ամբողջ գյուղի երազանք, որովհետեւ յուրաքանչյուր երեխա ավելի լավ կյանքի իրավունք ունի: Խաղահրապարակը նաեւ ներառական է լինելու, եւ հաշմանդամություն ունեցող երեխաները եւս այցելելու եւ իրենց առողջ ապրելակերպն այնտեղ կազմակերպելու հնարավորություն կունենան»,- նշել է *«Մարգահովիտի երիտասարդական կենտրոն»* ՀԿ-ի տնօրեն Էմիլիա Մարտիրոսյանը:

«Մարգահովիտ գյուղի դպրոցին մարզասարքերի տրամադրման» դրամաշնորհային ծրագրի շրջանակում 21.300 ԱՄՆ դոլար կտրամադրվի *«Մարգահովիտի երիտասարդական կենտրոն»* ՀԿ-ին՝ աշակերտների եւ մեծահասակների համար Մարգահովիտի դպրոցում խաղահրապարակ ու մարզվելու տարածք կառուցելու, համայնքում առողջ ապրելակերպը խրախուսելու եւ աշակերտների համար առավել նպաստավոր կրթական միջավայր ապահովելու նպատակով: Խաղահրապարակը եւ մարզվելու տարածքը նախատեսված են համայնքի՝ ավելի քան 400 աշակերտների եւ 3000 մեծահասակների համար:

«Նոյեմբերյանում կանանց եւ երիտասարդների համայնքային կենտրոնի ստեղծման» ծրագրի շրջանակում 70.955 ԱՄՆ դոլար կտրամադրվի Հայ Առաքելական Եկեղեցու Տավուշի թեմին՝ Նոյեմբերյանում համայնքային սոցիալական-կրթական կենտրոն ստեղծելու նպատակով: Այն կծառայի քաղաքի եւ շրջակա գյուղերի բնակչությանը: Արդյունքում՝ ավելի քան 200 երեխա եւ երիտասարդ կստանան մասնագիտական (արհեստագործական) վերապատրաստման հնարավորություններ, իսկ շուրջ 50 մեծահասակ՝ սոցիալական աշխատանքի ծառայություններ: Կենտրոնը կմատուցի նաեւ կրթական եւ սոցիալ-հոգեբանական ծառայություններ՝ ներգրավելով տարեկան առնվազն 1000 շահառուի՝ ներառյալ երեխաներին, երիտասարդներին, կանանց եւ անապահով ընտանիքներին:

Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Բարի լուր

Երկու ոսկե եւ մեկ արծաթե մեդալ

2021 թվականի մարտի 22-ից 28-ը Ռուսաստանի Դաշնության Վորոնեժ քաղաքում առցանց եղանակով կայացավ *«ՌՈԲՈՍՏ-2021»* միջշրջանային մրցույթ-փառատոնը, որի կազմակերպիչն էր *«էքսպերիմենտալ տեխնիկական դպրոցը»*:

Միջոցառմանը ներգրավված էին 1000-ից ավելի մասնակիցներ Ռուսաստանի 48 շրջաններից, Բելոռուսից, Ղազախստանից եւ Հայաստանից: Հայաստանը ներկայացնում էր *«Ֆիզմաթ-Հայաստան»* (*«Физмат-Армения»*) թիմը, որի անդամներն էին ԵՊՀ-ին առընթեր Ա.Շահինյանի անվան ֆիզմաթ հատուկ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ **Նարեկ Սարգսյանը** եւ 10-րդ դասարանի աշակերտ **Գեւորգ Սարգսյանը**:

Մրցութի թեժ պայքարի ընթացքում մասնակից թիմերը կատարեցին փորձի փոխանակում, միմյանց հաղորդեցին իրենց գաղափարները, ստացան նոր գիտելիքներ: Մրցույթի անցկացման օրերին կազմակերպվեցին առցանց դասընթացներ, էքսկուրսիաներ, խորհրդատվություններ միջազգային մասնագետների հետ:

Թեեւ կորոնավիրուսային համավարակի պատճառով մրցույթն անցկացվեց առցանց, միջոցառումը կազմակերպված էր բարձր մակարդակով: Մրցույթի կազմակերպիչներն արել էին ամեն ինչ, որ մասնակիցներին առավելագույնս ներգրավեն եւ բավարարեն նրանց հետաքրքրությունները:

Ֆիզմաթի դպրոցի թիմը մրցույթի շրջանակներում ներկայացրեց երեք նախագիծ՝ *«Խելացի տուն»*, *«Բիոնիկ ձեռք»*, *«Դաշնակահար ռոբոտ»*, որոնք բոլորն էլ զբաղեցրին մրցանակային պատվավոր տեղեր: «Ֆիզմաթ-Հայաստան» թիմը արժանացավ 2 ոսկե եւ 1 արծաթե մեդալի՝

առաջին տեղ՝ ՈՍԿԵ մեդալ *«Խելացի տուն»* անվանակարգ,

առաջին տեղ՝ ՈՍԿԵ մեդալ *«3D մեխանիկա»* անվանակարգ,

երկրորդ տեղ՝ ԱՐԾԱԹԵ մեդալ *«Կիբեռնետիկական արվեստ»* անվանակարգ:

Ինչպես նշում են մասնակիցները, սա հիասքանչ հնարավորություն էր՝ չափելու իրենց ուժերը միջազգային հարթակում եւ նոր գիտելիքներ ստանալու համար:

Մեկ բուհ, մեկ մասնագիտություն

սկիզբը՝ էջ 1

Կենտրոնացված, ներբուհական եւ առաջին փուլի միասնական քննությանը մասնակցելու եւ ընտրած մասնագիտությունը նշելու **համար ապրիլի 15-ից մինչեւ մայիսի 10-ը**՝ ժամը 18:00-ն ներառյալ, դիմորդը ԳԹԿ-ի կայքում լրացնում է ընդունելության դիմում-հայտը՝ ըստ հաստատված ձեւի: Ընդ որում՝ դիմորդը մինչեւ հայտագրման ավարտը կարող է կատարել նախընտրած բուհի եւ մասնագիտության փոփոխություն: ԳԹԿ-ն պարտավոր է ապրիլի 1-ից սկսած առնվազն հինգ անգամ զանգվածային լրատվության միջոցներով հրապարակել հայտարարություն, որտեղ կնշվեն ընդունելության դիմում-հայտերի ընդունումն սկսելու եւ ավարտելու ժամկետները, նախորդ տարիների շրջանավարտների ընդունելության դիմում-հայտերն ընդունող հանրակրթական ուսումնական հաստատությունների անվանումները:

«Ընդունելության քննությունների ավարտից եւ ընդունելության հիմնական փուլի արդյունքների ամփոփումից հետո, ըստ թափուր մնացած տեղերի, կկատարվի ընդունելության լրացուցիչ փուլի հայտագրումը, որին կարող են մասնակցել ընդունելության քննություններից դրական միավորներ ստացած, սակայն մրցույթից դուրս մնացած դիմորդները: Լրացուցիչ փուլում դիմորդները հնարավորություն ունեն հայտագրելու 6 այնպիսի մասնագիտություն, որոնց ընդունելության համար պահանջվող միասնական քննությունները դիմորդն արդեն հանձնել է՝ հաղթահարելով դրական միավորի նվազագույն շեմը»,- նշել է Վ. Դումանյանը:

Նա նաեւ տեղեկացրել է, որ այս տարի բուհերի դիմորդները հանձնելու են երկու քննություն, ինչը կբացառի նախորդ տարի առաջացած չնախատեսված խնդիրները, որոնք առաջ էին եկել, նաեւ համավարակով պայմանավորված, մեկ քննությամբ ընդունելություն կատարելու պատճառով:

Լրացուցիչ փուլի հայտագրումը կատարվելու է հուլիսի 19-26-ը՝ դիմում-հայտը առցանց լրացնելու տարբերակով:

Պարզաբանելով որոշումը՝ ՀՀ վարչապետը հույս է հայտնել, որ նոր կարգն ընդունելության գործընթացն առավել հստակեցնելու հնարավորություն կտա:

Լրացուցիչ փուլի մրցույթն անցկացվում է մեկ կամ ավելի բուհի մինչեւ վեց մասնագիտության հայտագրմամբ, եթե տվյալ մասնագիտությունների առարկաներից դիմորդն ունի դրական գնահատական եւ այդ մասնագիտություններում (անվճար եւ վճարովի) առկա են թափուր տեղեր:

Հիմնական եւ լրացուցիչ փուլի մրցույթի անցկացման ժամանակ նախապատվությունը տրվում է տվյալ մասնագիտության քննություններից առավել բարձր միավորներ ունեցող դիմորդին:

Հայտագրման այս եղանակը հնարավորություն է տալիս մասնագիտական հստակ կողմնորոշվածություն ունեցող դիմորդներին բուհ ընդունվել՝ նվազեցնելով պատահական կամ չնախընտրած մասնագիտություններով բուհ ընդունվելու խնդիրը:

Նոր կարգով, որպես ընդունելության քննություն, միայն 2021-2022 ուսումնական տարվա համար ամրագրվել են նաեւ *«Արարատյան բակալավրիատ»*-ի քննությունները՝ հաշվի առնելով ընթացիկ ուսումնական տարվա շրջանավարտների ակնկալիքները:

Սահմանվել է արտոնություն մարտական հերթապահություն իրականացնող զորամասերում պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած եւ զորացրված դիմորդների համար: Զորացրվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում, ընդունելության քննությունները դրական միավորներով հանձնելու դեպքում նրանք կունենան ընդհանուր մրցույթից դուրս անվճար ուսուցմամբ ընդունվելու հնարավորություն՝ ըստ ՀՀ կառավարության կողմից հաստատված տեղերի:

Տվյալ մասնագիտությունից կառավարության կողմից բանակից զորացրվածների համար անվճար տեղեր հատկացված չլինելու դեպքում, զորացրված դիմորդը անվճար ուսուցման մրցույթին կմասնակցի ընդհանուր հիմունքներով, իսկ վճարովի ուսուցման համակարգ կընդունվի մրցույթից դուրս:

Հավելենք, որ Կառավարությունը 2021-22 ուսումնական տարվա համար բակալավրի կրթական ծրագրով հատկացրել է 2918 անվճար եւ 22.300 վճարովի տեղ:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Լոռու մարզի Ջորագյուղի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (3 դասաժամ, տղաների խումբ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստա-վորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 22-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Ջորագյուղի հիմնական դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Ջորագյուղ, 7/3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 13-00-26 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Լոռու մարզի Հարթագյուղի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (18 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստա-վորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 22-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Լոռու մարզի Հարթագյուղի միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 80-90-54 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Արագածոտնի մարզի Բյուրականի հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ) ուսուցչի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստա-վորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 22-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Արագածոտնի մարզի Բյուրականի հ. Թումանյանի անվան միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Արագածոտնի մարզ, գ. Բյուրական, 1-ին փողոց, շենք 1:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 13-10-09 հեռախոսահամարով:

Գործունեության առաջին 100 օրվա ամփոփում

սկիզբը՝ էջ 3

«Դա լավագույն կարգավորումը չէր,- նշել է Վահրամ Դումանյանը եւ հավելել,- *փորձը ցույց է տալիս, որ նման դեպքերում նախարարի կատարած նշանակումները խնդիրներ էին առաջացնում: Անկեղծ պետք է ասեմ, որ սա այն դեպքն է, երբ ինքս էլ դժգոհ եմ իմ հրամանից. ստիպված եմ ընտրել երկու թեկնածուներից մեկին՝ իմանալով, որ հակառակ կողմը, ամենայն հավանականությամբ, դժգոհելու է: Խնդիրը պայմանավորված չէ որեւէ անձով, խնդիրը համակարգային է»*: Ուստի, որոշվել է կատարել փոփոխություն՝ տալով այնպիսի կարգավորում, որ ընտրությունը կատարվի կառավարման խորհրդի կողմից: Նոր կարգով ո՛չ նախարարը, ո՛չ էլ որեւէ պաշտոնյա դպրոցի տնօրենի այս կամ այն թեկնածուին նախապատվություն տալով նշանակելու իրավասություն չունեն:

Համավարակով պայմանավորված՝ հեռավար դասեր եւ նախակրթարանների ընդունելության սահմանափակում

Համավարակով պայմանավորված՝ այս պահի դրությամբ մոտ երեք տասնյակ դպրոցներում դասերը ժամանակավորապես կազմակերպվում են հեռավար ձեւաչափով՝ մասնակի կամ ամբողջությամբ: ԿԳՄՍ նախարարի տեղակալ Ժաննա Անդրեասյանը նշել է, որ նախարարությունը յուրաքանչյուր շաբաթ մոնիթորինգ է իրականացնում, եւ ներկայացված թվերն անընդհատ փոխվում են՝ կախված վարակի տարածման ցուցանիշներից: Համաձայն առողջապահության նախարարի հրամանով հաստատված կանոնների՝ եթե որեւէ դպրոցում աշակերտների կամ ուսուցիչների շրջանում հայտնաբերվում է 10 տոկոս եւ ավելի վարակվածության ցուցանիշ, ապա տվյալ դպրոցը դիմում է լիազոր մարմնին՝ դասերը 14 օրով հեռավար կազմակերպելու համար: Ըստ փոխնախարարի՝ լինում են նաեւ դեպքեր, երբ դպրոցը մասամբ, կոնկրետ մեկ կամ մի քանի դասարաններով է անցնում հեռավար կրթության՝ հաշվի առնելով հայտնաբերված դեպքերի լոկալ բնույթը:

Լրագրողի այն հարցին, թե երբ հնարավոր կլինի նախադպրոցական հաստատություններում նոր ընդունելություն իրականացնել, նախարարի տեղակալը նշել է, որ համավարակով պայմանավորված՝ ընդունելության սահմանափակումները մեղմացնելու հարցը քննարկվել է միջգերատեսչական հանձնաժողովի նիստում:

«Փետրվարին որոշ պայմաններ մեղմացվեցին, բայց քիչ թվով երեխաներ կարողացան ընդգրկվել նախադպրոցական հաստատություններ, որովհետեւ պահանջարկը շատ ավելի մեծ էր: Ունենք սկզբունքային համաձայնություն, որ համաճարակային իրավիճակի թուլացման եւ կայունացման դեպքում (ցավոք, հիմա խոսվում է նոր ալիքի մասին) նախադպրոցական հաստատություններում ընդունելությունը պետք է ավելի մեծ ծավալներով կատարվի: Սա շատ կարեւոր եւ լուրջ խնդիր է, որն առնչվում է ոչ միայն երեխաների խնամքին, այլեւ զարգացմանը: Մենք առանց այդ էլ ունենք նախադպրոցական հաստատություններում տեղերի խնդիր, եւ շատ երեխաներ անգամ սովորական պայմաններում չեն կարողանում ժամանակին եւ պատշաճ օգտվել նախադպրոցական կրթությունից»,- նշել է Ժ. Անդրեասյանը: Նա նաեւ տեղեկացրել է, որ քննարկվում է համավարակի թուլացման դեպքում դպրոցներում երկարօրյա ծառայությունները վերսկսելու հարցը:

Արցախում Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական հուշարձանները ոչնչացման վտանգի տակ են

Նախարար Վահրամ Դումանյանը, անդրադառնալով Արցախում Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական հուշարձանների պաշտպանությանը, նշել է, որ ԿԳՄՍ նախարարությունը համագործակցում է ԱԳՆ-ի հետ, միջազգային ասպարեզում համատեղ աշխատանք կատարելու նպատակով: *«Արցախի՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած մշակութային արժեքների վերաբերյալ հարցը լրջագույն խնդիր է մեզ համար: Այդ հարցը գտնվում է ՅՈՒՆԵՍԿՕ-ի դաշտում, մենք էլ մեր հերթին այդ ուղղությամբ Արտաքին գործերի նախարարության հետ համատեղ աշխատանքներ ենք տանում: Մենք կանենք ամեն ինչ, որպեսզի միջազգային հանրության ուշադրությունը սեւեռենք այդ խնդրի վրա: Տարբեր երկրների դեսպաններ, միջազգային, հեղինակավոր կառույցների ղեկավարներ այցելում են ԿԳՄՍ նախարարություն»*,- նշել է Դումանյանը եւ հավելել, որ միջազգային հանդիպումներում «կարմիր թելով» անդրադարձ է կատարվում Արցախում գտնվող հայկական մշակության ժառանգության հարցին:

Նրա խոսքով՝ Արցախում գտնվող մշակութային կոթողների պաշտպանության հարցը դեռեւս շարունակում է մնալ չլուծված:

ԿԳՄՍ փոխնախարար Արա Խզմալյանն էլ ազգային ողբերգություն որակեց այն, ինչ տեղի է ունենում Արցախի բռնագրաված տարածքներում գտնվող հայկական հուշարձանների հետ:

Նախարարի տեղակալ Արայիկ Խզմալյանը, անդրադառնալով Առնո Բաբաջանյանի ծննդյան 100-ամյակին նվիրված հոբելյանական միջոցառումներին, տեղեկացրել է, որ ծրագիրը կազմված է, այն կներկայացվի հանձնաժողովին եւ հաստատումից հետո կիրականացվի: Նրա խոսքով՝ անվանի կոմպոզիտորին նվիրված ծրագիրը կլինի բավականին հետաքրքիր եւ հագեցած:

Անհրաժեշտ է առնվազն 35 հազար տեղանոց մարզադաշտ

Անդրադառնալով ազգային ստադիոն ունենալու թեմային՝ ԿԳՄՍ նախարարի տեղակալ Կարեն Գիլոյանն ասել է, որ հարցը նախարարության եւ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի ուշադրության կենտրոնում է. *«Ազգային ստադիոն ունենալն անհրաժեշտություն է: Այս գաղափարը շարունակում է մնալ մեր ուշադրության կենտրոնում: Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիան այս ուղղությամբ կոնկրետ քայլեր է ձեռնարկում միջազգային կառույցների, այդ թվում՝ ՖԻՖԱ-ի եւ ՈՒԵՖԱ-ի տարբեր հիմնադրամների հետ: Պարզապես ազգային արժեք ճանաչված «Հրազդան» ստադիոնի հետ կապված եւս կան մի շարք հարցեր, եւ դեռեւս չկա հստակություն: Պետք է հասկանանք՝ կկառուցվի ամբողջությամբ նո՞ր ստադիոն, թե՞ կվերակառուցվի «Հրազդանը»: Այս հարցերն ընթացքի մեջ են եւ մեզանից անկախ պատճառներով դեռեւս ձգձգվում են:* ***Ամեն դեպքում, վստահ եմ, որ ազգային ստադիոն ունենալու ենք եւ ընդունելու ենք շատ բարձր մակարդակի հանդիպումներ: 35 հազարից ավելի հանդիսականի ընդունող ստադիոն ունենալը մեզ համար անհրաժեշտություն է:*** *Այդ դեպքում կկարողանանք Հայաստանում անցկացնել Եվրոպա լիգայի եզրափակիչ, ՈՒԵՖԱ-ի Սուպերգավաթ եւ նման մակարդակի այլ հանդիպումներ»*:

ԿԳՄՍ նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը տեղեկացրել է, որ տարվա երիտասարդական մայրաքաղաքում՝ Կապանում, նախատեսվում է իրականացնել բազմաթիվ միջոցառումներ. *«Կապանը երիտասարդական մայրաքաղաք է հռչակվել 2020 թվականին, սակայն կորոնավիրուսի համավարակով պայմանավորված՝ միջոցառումներ չեն անցկացվել: Նախատեսում ենք, որ ապրիլին կլինի Կապանին երիտասարդական մայրաքաղաքի բանալին հանձնելու հանդիսավոր արարողությունը: Տարին հագեցած կլինի երիտասարդական միջոցառումներով, որոնց մեծ մասը կանցկացնենք հենց Կապանում: Բացի դրանից՝ անցյալ տարեվերջին տեղի ունեցած ԱՊՀ մասնակից պետությունների երիտասարդության հարցերի խորհրդի նիստում որոշվեց, որ այս տարի խորհրդի նախագահությունը ստանձնելու է Հայաստանը: Այդ միջոցառումը եւս նախատեսում ենք անցկացնել Կապանում: Դա տեղի է ունենալու աշնանը եւ համընկնելու է մեկ այլ կարեւոր միջոցառման՝ «100 գաղափար ԱՊՀ-ի համար» մրցույթի եզրափակիչ փուլի հետ, որը եւս նախատեսում ենք անցկացնել Կապանում»*:

Այլ հարցեր

ԿԳՄՍ նախարար Վահրամ Դումանյանը, ի պատասխան լրագրողի հարցին, հայտարարել է, որ առաջիկա խորհրդարանական ընտրությունների ժամանակ դպրոցները պետք է զերծ մնան քաղաքական գործընթացներում ներգրավվելուց: ԿԳՄՍ նախարարությունն այդ ուղղությամբ ձեռնարկելու է բոլոր քայլերը:

Ասուլիսի ժամանակ անդրադարձ է եղել նաեւ ուսուցիչների կամավոր եւ պարտադիր ատեստավորմանը, ինչպես նաեւ կամավոր ատեստավորման արդյունքում 30-50 տոկոս աշխատավարձի բարձրացում ստանալու հնարավորությանը:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ
Հեղինե ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Արցախ

Իբրեւ... հույսի մի նշխար

«Արվեստով դեպի խաղաղություն». այս նշանաբանն ուներ օրերս Ստեփանակերտի պատկերասրահում կազմակերպված գրական-երաժշտական երեկոն:

Ողջույնի խոսքում պատկերասրահի տնօրեն **Ելենա Դադայանը** կարեւորել է նմանատիպ միջոցառումների անցկացումը: *«Շատ դժվար է եղածի հետ համակերպվել, անանց ցավն ու մորմոքը հաղթահարել, բայց պետք է ուժ գտնել՝ հանուն ապագայի: Մշակույթը բոլորիս լավագույն օգնականն է »*,- նշել է նա:

Միջոցառմանը ներկա՝ Արցախում ռուս խաղաղապահ զորակազմի փոխգնդապետ **Իգոր Յակուշեւը**, ով նաեւ երաժիշտ է, իր խոսքում նշել է, որ համագործակցության կարճատեւ ընթացքում հասցրել է ծանոթանալ Արցախի մշակույթին: *«Անկեղծ ասած՝ ինձ զարմացրել է տեղի երաժիշտների, դասատուների ու սովորողների կրթական մակարդակը»*,- նշել է նա:

Երեկոյին հանդես են եկել նաեւ Կոմիտասի անվան երաժշտական դպրոցի, մանկապատանեկան ստեղծագործության տան, Արցախի պետական երգչախմբի, Սայաթ-Նովայի անվան երաժշտական քոլեջի սաներն ու նրանց դասատուները:

Միավորող նշանակությամբ

«Դասավանդիր, Հայաստան» կրթական հիմնադրամը կրկին օգնության ձեռք է մեկնել Արցախի կրթական համակարգին:

Օրերս ԱՀ ԿԳՄՍ նախարարության կրթական հիմնադրամի միջ կնքվել է պայմանագիր: Համաձայն պայմանագրի՝ *«Դասավանդիր, Հայաստանը»* ստանձնում է Արցախում կրթական նոր ծրագրեր իրականացնելու առաքելությունը: Ասել է թե՝ եզակի հնարավորություն կընձեռի դպրոցականներին՝ ունեցած առարկայական գիտելիքներն ու հմտություններն օգտագործել ի շահ հայրենի բնակավայրերի զարգացման:

Կրթական հիմնադրամը նախարարությանն է նվիրաբերել 650 արկղ-փաթեթներ՝ ծրագրի շրջանակներում խմբային աշխատանքների իրականացման համար:

Հիմնադրամի՝ Արցախի գրասենյակի տնօրեն **Արմեն Հովհաննիսյանի** գնահատմամբ՝ ծրագիրը կնպաստի հետպատերազմյան Արցախի կրթական համակարգի աշխուժացմանը:

ԱՀ ԿԳՄՍ նախարար **Լուսինե Ղարախանյանը** մեզ հետ ունեցած զրույցում ընդգծեց, որ կրթական նոր ծրագրերը միավորող ու համախմբող նշանակություն կունենան ծայրագույն այս ժամանակներում ոլորտի բազում խնդիրների հաղթահարման գործում:

Ղրիմի հայ համայնքից

Օրերս Արցախի մայր բուհում կայացավ *«Արցախի առօրյան»* խորագրով *«Լավագույն հոդված»* մրցույթի արդյունքների ամփոփումն ու մրցանակաբաշխությունը: Միջոցառմանը ներկա էին նաեւ ԱՀ ԿԳՄՍ նախարարության պատասխանատուներ՝ նախարար **Լուսինե Ղարախանյանի** գլխավորությամբ:

Մրցույթը հայտարարվել եւ հովանավորվել է Ղրիմի հայ համայնքի *«Լույս»* բարեգործական հիմնադրամի կողմից: Արդյունքների ամփոփմանը հեռուստակամրջով մասնակցել են հիմնադրամի տնօրեն, փիլիսոփայության դոկտոր, պրոֆեսոր, Ղրիմի համալսարանի փիլիսոփայության ֆակուլտետի դեկան **Օլեգ Գաբրիելյանը**, Սիմֆերոպոլի հոգեւոր համայնքի առաջնորդ **Տեր Ներսես** քահանան, Ղրիմի հայ համայնքի ներկայացուցիչներ:

Ողջունելով ներկաներին՝ ԱՀ ԿԳՄՍ նախարարը շնորհակալություն է հայտնել նախաձեռնության հեղինակներին: Սփյուռքի աջակցությունն Արցախում անենուր է՝ նշել է նախարարը՝ վստահություն հայտնելով մեր հայրենիքի վերականգնման եւ հզորացման առնչությամբ:

ԱրՊՀ ռեկտոր **Արմեն Սարգսյանը,** բարձր գնահատելով համալսարանի եւ Ղրիմի հայ համայնքի միջեւ համագործակցությունը, մրցանակաբաշխությունը համարել է փոխադարձ շփումների հաջողված ծրագրերից մեկը: *«Ղրիմի հայ համայնքը հայտնի է իր հայրենանվեր գործունեությամբ՝ դեռ պատմության խորքերից,եւ այն այսօր էլ շարունակվում է՝ ապագայի տեսլականով»*,-նշել է նա:

Տեսակապի միջոցով իրողությունն է հղել Ղրիմի հայ համայնքի ղեկավար **Գեորգի Հակոբյանը՝** կարեւորելով Արցախի հետ համագործակցությունը՝ հետագայում կապերի ամրապնդման եւ արդյունավետության բարձրացման պատրաստակամությամբ:

Մրցույթի բոլոր մասնակիցները խրախուսվել են հավաստագրով, նվերներով, իսկ մրցանակային տեղեր զբաղեցրածները նաեւ արժանացել են դրամական պարգեւների:

Մրցույթի շրջանակներում Ղրիմի հայ համայնքը ԱՀ ԿԳՄՍ նախարարությանն է փոխանցել մեկ միլիոն ՀՀ դրամ՝ Արցախում ոսկերչու-թյունը ուսուցանելու եւ զարգացնելու ծրագիր իրականացնելու համար:

...Մեկ մոմ՝ ընդդեմ խավարի...

Արցախի մայր թատրոնը,որն իր մեկ դարին հարող գործունեությամբ բազում դժվարություններ է հաղթահարել, հետպատերազմյան իրավիճակում փորձում է առաջնորդվել այն իմաստնությամբ,որ խավարի դեմ՝ անգամ մեկ մոմ վառելով, հնարավոր է այն մեղմացնել: Եվ իր բաժին մեկ մոմը մայր թատրոնի համար, ցավի ու տառապանքի ծանր մղձավանջի միջով, դարձավ նոր ներկայացումը:

Աշխարհի շատ ժողովուրդների մոտ տարբեր մոտիվներով հյուսված *«Ալվան ծաղիկ»* հեքիաթի ռուսական տարբերակի բեմադրությունն ունի իր նախապատմությունն այս թատրոնի տարեգրության մեջ:Անցյալ դարի 60-ական թվականներին այն իր հաստատուն տեղն ուներ թատրոնի խաղացանկում: Նոր բեմադրությունը՝ իր խորխորհրդով ու նոր դերակատարումներով, անշուշտ, հարուստ տարեգրության նոր էջն է դառնալու: Մեզ հետ ունեցած զրույցի ընթացքում բեմադրող ռեժիսոր, ԱՀ ժողովրդական արտիստ **Քաջիկ Հարությունյանը** նշեց, որ թատրոնի տնօրինությունը որոշել է, ի հեճուկս հնարավորությունների, առաջինը ներկայանալ հենց պատանի հանդիսատեսին: Նպատակը. նրանց հոգուց փոքր ինչ վանել պատերազմի չլռող տրտմությունը:

Եվ այս ամենի հոլովույթում չի մոռացվել թատրոնի միջազգային օրը՝ ներկայացման առաջնախաղով, (նկարչական ձեւավորումը՝ **Զորիկ Գալստյանի**, երաժշտական ձեւավորումը՝ **Անգելինա Բաբայանի**):

Մարտի 27-ին Ստեփանակերտի մշակույթի եւ երիտասարդության պալատում նաեւ ավագ սերնդի հանդիսատեսն էր: Բոլորի հուզմունքն անթաքույց էր,քանզի պատերազմից ավերված Արցախում մշակութային վեհերոտ քայլերն արհավիրքին դիմակայելու ուղերձ են բոլորիս: Ներկաներին առաջինը ողջունեց թատրոնի գրական մասի վարիչ **Կարինե Ալավերդյանը**: Նա թատրոնի միջազգային տոնի՝ մեր անդրադարձում, վերահաստատեց հայերիս ապրելու կամքն ու վճռականությունը: Դյուրին չէ հայրենակորուստ արցախցուն ինչ որ բան հուշել, ավելին՝ հուսադրել,սակայն,մեր ապավենը միշտ մենք ենք՝ անկորնչելի ազատատենչությամբ ու հայրենասիրությամբ՝ նշեց նա:

Նոր բեմադրության եւ թատերական տոնի առթիվ ներկաներին շնորհավորեց ռուս խաղաղապահ զորախմբի ներկայացուցիչ,փոխգնդապետ **Ի. Յակուշեւը**: Խաղաղություն մաղթելով՝ նա իր ուրախությունը հայտնեց, որ պատերազմի հետեւանքով խզված թատրոնի գործունեության վերականգնման առաջին բեմադրությունը ռուսական հեքիաթին է նվիրված:

Ներկայացումը ջերմությամբ ընդունվեց հանդիսատեսի կողմից: Դերասանական կազմը հրաշալի մարմնավորեց հեքիաթի հերոսներին: Հատկապես ուշագրավ էր երիտասարդ դերասանուհի՝ **Շողեր Սարգսյանի** խաղը՝ գլխավոր հերոսուհու՝ Ալյոնայի դերում: Տպավորիչ էր **Մարտին Ալոյանի** (վաճառական), **Սվետլանա Թովմասյանի** (դայակ), **Սամվել Եվրիյանի** (կախարդ), **Մարիաննա Գրիգորյանի** (ավագ քույր) խաղը: Ներկայացման ամբողջացմանը մեծապես նպաստեցին ճաշակով արված նկարչական եւ երաժշտական ձեւավորումները՝ ռուսական մշակույթի գունեղ տարրերով:

...Աշխարհի բոլոր ժողովուրդների հեքիաթներում բարին հաղթող է, անպարտ, պատրաստ՝ հաղթահարել անհաղթահարելին,սեր եւ համերաշխություն սերմանել: Բայց, ասես, մենք ենք այդ բոլոր պատումների հեղինակը, քանզի միայն մենք ենք հավատում բարու հաղթանակին: Նկատի ունենալով աշխարհի երկակի խաղերը եւ թշնամու յաթաղանակերպ ատելությունը մեր նկատմամբ,գուցե հենց մեր հոգին է ամբարիշտներից հալածական բարու ամենահուսալի հանգրվանը: Վկան՝ մեր անչար հայացքն աշխարհին:

Նման անդրադարձով ամփոփվեց բեմադրության պարգեւած երեկոն:ԱՀ ԿԳՄՍ նախարար **Լուսինե Ղարախանյանը** բարձր գնահատելով մայր թատրոնի ջանքը՝ առկա դժվարին պայմաններում,վկայակոչեց մեր ժողովրդի ստեղծած թատերարվեստի հազարամյակների պատմությունը:Ուստի թատրոնի միջազգային օրը տոն է բոլորիս համար՝ ասաց նախարարը:

Շնորհավորանքի խոսք ասաց նաեւ անվանի գրականագետ **Սոկրատ Խանյանը**: Երեկոն ավարտվեց ծաղկահանդեսով: Դերասանները ծաղիկներ ստացան եւ՛ հանդիսատեսից, եւ՛ նախարարությունից, եւ՛ խաղաղապահներից:

Նվարդ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
ք. Ստեփանակերտ,
մեր սեփական թղթակից

Մայր Աթոռ

«Մեր ժողովրդի կյանքը ի Հայրենիս եւ ի Սփյուռս սպասում է վշտերի անհապաղ սփոփման, չարչարանքներից հառնումի եւ հաղթական հարության»

Ապրիլի 4-ին Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցին տոնախմբեց մեր **Տեր եւ Փրկիչ Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Սուրբ Հարության** տոնը: Այս առիթով **Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Երկրորդ** Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Սուրբ եւ Անմահ Պատարագ մատուցեց Երեւանի Սուրբ Գրիգոր Լուսավորիչ մայր եկեղեցում:

Սրբազան արարողությանը Վեհափառ Հայրապետին, որպես առընթերականեր, սպասավորում էին Մայր Աթոռի լուսարարապետ Գերաշնորհ **Տեր Մուշեղ եպիսկոպոս Բաբայանն** ու Մայր Աթոռի Եկեղեցական հայեցակարգային հարցերի գրասենյակի պատասխանատու Գերաշնորհ **Տեր Վազգեն եպիսկոպոս Միրզախանյանը**:

Սուրբ Պատարագի ընթացքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը համայն հայությանը հղեց հայրապետական իր պատգամը՝ փոխանցելով ***«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»*** հրեշտակաբարբառ կենսանորոգ ավետիսը:

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Պատգամը Մեր Տեր Հիսուս Քրիստոսի Հրաշափառ Հարության տոնի առիթով

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Քրիստոս յարեաւ ի մեռելոց»
(Շարական Հարության):

Սիրելի՛ բարեպաշտ հավատացյալներ,

Այսօր Սուրբ Հարության հրաշափառ տոնն է, տոն՝ վերհառնումի, մեղքի ու մահվան հանդեպ հաղթության: Քրիստոս հարություն է առել, բացվել է գերեզմանի դուռը, հրեշտակները կյանքի լուսեղեն ավետիսն են բերել, առաքյալները զորացել եւ ոգեշնչվել են հարուցյալ Փրկչի հայտնությամբ: Սքանչելախորհուրդ Հարությամբ մեր Տերը՝ Հիսուս Քրիստոս, մարդկությանը պարգեւեց գողգոթաներից հառնելու, մահին հաղթելու եւ հավիտենական կյանքը ժառանգելու երկնային շնորհը: Մենք այդ վստահությամբ ենք քաջալերվում, նաեւ գոտեպնդվում նեղությունների ու վշտերի, մահվան ահասարսուռ իրողության հանդիման՝ ունենալով հաստատուն հավատը, որ Քրիստոս հարություն է առել եւ նորոգել է կյանքը, դուրս բերել մարդկությանը մեղքի ու չարիքի խավարից, հաշտություն հաստատել մարդու եւ Աստծո միջեւ: *«Աստված հավիտենական կյանք տվեց մեզ. եւ այդ՝ այն կյանքն է, որ Նրա Որդու մեջ է»*,- ասում է առաքյալը (Ա Հովհ. 5.11): Քրիստոսի Հարությամբ բացվել է օրհնյալ կյանքի, հույսի, սիրո, խաղաղության ու համերաշխության լուսավոր ուղին: Այս կենարար ճանապարհից շեղումը հարության փոխարեն մահ ու ավեր է սփռում, փրկության փոխարեն՝ դատապարտություն եւ կործանում, կյանքը դարձնում ատելության, բաժանումների հորձանուտ՝ լի չարի փորձություններով ու վտանգներով:

Սիրելիներ՛ն, անցյալ տարի մեր ժողովուրդը Փրկչի նմանությամբ վերստին կրեց խաչելության տառապանքը: Պատերազմի դժոխային հնոցում չարչարանաց գողգոթա անցնելով՝ զոհվեցին հազարավոր մեր սիրասուն զավակներ, կորցրեցինք Արցախի՝ հարազատ հայրենիքի զգալի մասը: Ինչպես պատերազմից առաջ, այնպես եւ հետպատերազմյան շրջանում մեր կյանքում հաստատուն չեղան տերունապատվեր սիրո եւ համերաշխության նախանձախնդրությունը, Աստծո պատգամների համաձայն կենսակերպը: Պառակտումներն ու սերմանվող ատելությունը, անհանդուրժողության ոգին, շարունակվող քաղաքական ալեկոծումները նոր ցնցումների ու անկումների վտանգի առջեւ են կանգնեցրել մեր երկիրն ու ժողովրդին՝ ստվերելով նաեւ հայրենանվիրումի ու ազգասիրության վեհ գաղափարները: Իսկ հայրենիքի անվտանգության չփարատվող մտահոգությունը, հայրենական կյանքի տեսլականի բացակայությունը, հիասթափությունն ու հուսախաբությունը անորոշության խավարով են մթագնել ապագայատեսիլ մեր հույսերը: Ոչ մի հանգամանք, ոչ մի նպատակ, ոչինչ չի կարող արդարացնել ազգի ու հայրենիքի մասնատումն ու տկարացումը, ազգային եւ հոգեւոր մեր արժեքների, նախնյաց ավանդների ոտնահարումը, նոր սերնդի ապազգայնացումն ու բարոյազրկումը, ազգի արժանապատվության ու պատվի նսեմացումը: Մեր առջեւ ծառացած քաղաքական, տնտեսական, սոցիալական բարդ հիմնախնդիրների հանդիման, ճգնաժամային դժվարին հանգամանքներում թաղման անձավի մեջ մնալով, իրավիճակից դուրս ելնելու անհրաժեշտ գործողություններում հապաղելով՝ մեր խաչելությունը չի պակվի հարության կենարար զորությամբ: Հարությունը չի կայանում մերժելի ատելությամբ ու թշնամանքով, բաժանումով ու քայքայումով, այլ սիրով եւ հայրենյաց սիրո շուրջ համախմբումով, նեղություններն ու դժվարությունները միասնաբար հաղթահարելով: Մեր ժողովրդի կյանքը ի հայրենիս եւ ի սփյուռս սպասում է վշտերի անհապաղ սփոփման, չարչարանքներից հառնումի եւ հաղթական հարության: Քրիստոսի պարգեւած փրկության եւ հարության լույսը, սիրելիներ, ճառագում է զոհողություններ ստանձնելու առաքինության միջոցով, զոհողություններ մեկս մյուսի հանդեպ, զոհողություններ ի սեր ողջ ժողովրդի: Այս լույսի ներքո է, որ եսապաշտությունն ընկրկում է աստվածապաշտության առջեւ, մահաբեր ընթացքը շրջվում է դեպի կենսատու Աստված, տառապանքների մատնող գործողությունները փոխակերպվում են հարուցյալ կյանքի արարումների՝ առաջնորդելով փրկության ու հավիտենության: Մեր երկիրն ու ժողովրդին պատուհասներից վեր հանելը, Արցախի կյանքը ավերներից բարձրացնելը եւ հայության ու հայրենիքի վերածնունդը հրամայական հանձնառություն են՝ իրագործելի ազգի բոլոր զավակների, քաղաքական կուսակցությունների, մասնավորապես մեծագույն պատասխանատվությունը կրող իշխանությունների կողմից: Հայրենաշեն ջանքերը կպսակվեն հաջողությամբ օրհասական իրավիճակից պետականությունը փրկելու նախանձախնդրությամբ, անձնական հավակնություններից հրաժարվելով, պետության ու ազգի շահը գերադասելով: Այս ոգով հաղթական հանգրվանի պիտի հասցնենք մեր ցավագին կորուստների վերականգնման, մեր ազգային իրավունքների պաշտպանության, Հայոց Ցեղասպանության համընդհանուր ճանաչման մեր նվիրական ձգտումները:

Սիրելիներ՛ն, Քրիստոս հարություն է առել եւ մեզ պարգեւել զորությունը նորոգելու մեր հոգիները, մեր կյանքը: Չհուսալքվենք ու թեւաթափ չլինենք մեզ պաշարած փորձությունների հանդիման: Զորացյալ մնանք հարության հավատով: Հարության հրաշքը կենսագործենք մեր երկրում ու կյանքում: Ջերմ իղձերով փարված մնանք մեր հարազատ բնօրրանին՝ մեր հողին, ջրին, մեր օջախին, կանխելու համար արտագաղթը հայրենիքից եւ հզորացնելու մեր պետությունը: Տիրոջ զորակցությամբ հաղթահարելու ենք մեր կյանքի դառնություններն ու արհավիրքները՝ հասնելով մեր հույսերի ու տեսիլքների իրագործմանը եւ հարուցյալ նոր կյանքի կերտմանը:

Հոգենորոգ այս օրը աղոթք բարձրացնենք, որ Փրկիչ մեր Տիրոջ օրհնությունն ու շնորհները սփռվեն մարդկանց սրտերում՝ խաղաղություն եւ բարօրություն բերելով աշխարհին, իմաստություն քաղաքական գործիչներին՝ պետական ու հասարակական կյանքը կարգավորելու եւ բարեկեցության առաջնորդելու պատասխանատվության մեջ: Աղոթենք պատերազմում վիրավորված մեր զավակների առողջության, գերիների եւ անհայտ կորածների վերադարձի, մեր զոհված քաջորդիների եւ համավարակից մահացածների հոգիների հանգստության համար՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի խոսքի մխիթարությամբ. *«Ես իսկ եմ հարություն եւ կյանք. ով հավատում է Ինձ, թեպետ եւ մեռնի, կապրի»* (Հովհ. 11.25): Թող Սուրբ Զատկի հուսառատ ավետիսը հայրենաշեն երազների իրագործման զորությունը պարգեւի աշխարհասփյուռ մեր ժողովրդին: Եվ թող Հարության արշալույսով զարդարվի երկնակամարը մեր ազգային-եկեղեցական կյանքի, եւ խաղաղ ու ապահով մնա մեր հայրենիքը՝ Հայաստան ու Արցախ աշխարհը, հավատքով ամուր, սիրով ու միասնական՝ մեր ժողովուրդը, այսօր եւ միշտ եւ հավիտյան. ամեն:

Քրիստոս յարեաւ ի մեռելոց,
Օրհնեալ է Յարութիւնն Քրիստոսի

Դիմանկար

«Վարակվեցին եւ՛ բժիշկները, եւ՛ բուժքույրերը, բայց ստիպված էին աշխատել...»

«Դիագնոստիկա» բժշկական կենտրոնի գլխավոր տնօրեն **Ռուզաննա Հակոբյանի** գնահատմամբ՝ վերջին մեկ տարվա ընթացքում թոքաբորբի կասկածներով կորոնավիրուսային հիվանդության հետազոտությունները տատանումներ են ունեցել: Մասնագետի խոսքով՝ մոտ մեկ տարի առաջ, երբ առաջին անգամ համավարակով պայմանավորված կարանտին հայտարարվեց՝ թոքերի համակարգչային տոմոգրաֆիայի՝ կատե հետազոտության քչերն էին դիմում: Հետագայում՝ վարակի աճին զուգընթաց ավելացավ նաեւ թոքերի համակարգչային տոմոգրաֆիայի, ինչպես նաեւ ռենտգեն հետազոտությունների ծավալը:Փոխարենն այդ ընթացքում կտրուկ նվազել էր այլ հիվանդություններով հետազոտությունների (ստամոքսայիքային տրակտ, լարդ-լեղապարկ եւ այլն) թիվը, քանի որ մարդիկ վախենում էին համավարակից եւ իրենց խրոնիկ խնդիրների բուժումը փորձում էին հնարավորինս հետաձգել: *«Նման դեպքերում ցանկալի չէ այցելել մի վայր, որտեղ հիվանդ-վարակիրների հետ հանդիպումն անխուսափելի է, իսկ հիվանդանոցները հենց այդպիսի վայրեր են: Հետեւաբար, մարդիկ փորձում էին նախապես պլանավորած բազմաթիվ հետազոտություններ հետաձգել: Ամռանը, երբ մի պահ վարակը նահանջեց, այլ հետազոտությունների թիվը կրկնակի աճեց, հիմա նորից նվազել է, քանի որ կորոնավիրուսային հիվանդության վարկի տարածումը կրկին աճել է»*,- նշում է Ռուզաննա Հակոբյանը: Բժշկական կենտրոնի տնօրենը հատկանշական է համարում, որ համավարկի ակտիվացման ընթացքում՝ թոքերի տոմոգրաֆիկ հետազոտությանը զուգահեռ աճել է նաեւ սիրտ-անոթային հետազոտությունների թիվը, որը, նրա կարծիքով, պայմանավորված է համավարկի թողած երկրորդային հետեւանքներով: *«Բազմաթիվ մարդիկ, որոնք մինչ այդ չէին էլ իմացել, որ իրենք սիրտ-անոթային խնդիրներ ունեն, կորոնավիրուսային հիվանդությամբ վարակվելուց հետո, ըստ կլինիկայի, ունենում են բարդություններ եւ իմանում, որ իրենք նման խնդիր ունեն»*,- նշում է Ռ. Հակոբյանը, ավելացնելով, որ համավարակն այս իմաստով օրգանիզմի խնդիրների բացահայտման յուրօրինակ կատալիզատորի դեր է կատարում՝ հնարավոր բոլոր թույլ օղակները գլուխ են բարձրացնում:

Անցյալ տարվա գարնանը թոքերի տոմոգրաֆիկ հետազոտությունների մեծ մասը բարդ եւ խորացված դեպքերն էին՝ մարդիկ դիմում էին միայն այն ժամանակ, երբ վիրուսային հիվանդությունը ծանր ընթացք էր ստանում, ախտորոշվում էր հիմնականում եկկողմանի թոքաբորբ:

Սակայն հետագայում դիմողները շատացան մարդկանց մոտ որոշակի խուճապային տրամադրություն էր տարածվել, նրանք դիմում էին անգամ շատ թեթեւ կասկածի դեպքում՝ ուղղակի ապահով լինելու եւ համոզվելու համար, որ թոքերը մաքուր են եւ իրենք հավելյալ բարդությունների առաջ չեն կանգնի: *«Եղել են դեպքեր, երբ մեր մասնագետները արտաքին զննմամբ հասկացել են, որ տվյալ հաճախորդը թոքերի տոմոգրաֆիայի կարիք չունի՝ չի ջերմում, շնչառությունը նորմալ է, որեւէ այլ ախտանիշ չկա: Բայց միեւնույնն է՝ մարդը պնդում է, որ իրեն անպայման հետազոտենք, որովհետեւ ինքն անհանգիստ է: Ավելին, նա նաեւ պնդում էր, որ իրենից բացի նաեւ իր ընտանիքի անդամներին հետազոտենք: Սա արդեն խուճապի հետեւանք էր»*:

Ինչո՞վ է տարբերվում սովորական թոքաբորբը վիրուսային կամ կորոնավիրուսային թոքաբորբից: Ըստ Ռուզաննա Հակոբյանի՝ վիրուսային կամ կորոնավիրուսային թոքաբորբը բարդացման փուլում կարող է վերածվել բակտերիալ թոքաբորբի, որը վտանգավոր է: Համավարակի տարածման ակտիվ շրջանում թոքերի տոմոգրաֆիկ հետազոտությունների մոտ 80 տոկոսի դեպքում հաստատվել է վիրուսային թոքաբորբ, որի բուժումն այլ մոտեցում է ենթադրում. ի տարբերություն սովորական թոքաբորբի, հակաբիոտիկային բուժումն այստեղ միշտ չէ, որ արդարացված է, ավելի արդյունավետ է հորմոնալ դեղորայքի կիրառումը, իսկ երկարատեւ ընթացքի եւ բակտերիալ թոքաբորբի վերածվելու դեպքում լրացուցիչ ավելացնում է նաեւ հակաբիոտիկային բուժումը: *«Եթե չկա թոքաբորբ, սակայն վիրուսը հաստատված է եւ ընթանում է ջերմությամբ, պետք է բարձրացնել օրգանօզմի իմունիտետը եւ անընդհատ պահել հսկողության տակ»*,- նշում է նա՝ ավելացնելով, որ մենք՝ հայերս, հակված ենք դեպի հակաբիոտիկային բուժումների: *«Հաստատված կորոնավիրուսի եւ թոքաբորբի դեպքում, հատկապես երբ բարձր ջերմություն կա, կարելի է սպասել մեկ շաբաթ, որից հետո, եթե ջերմությունը չի իջնում,պետք է անցնել հակաբիոտիկների»*: Հիվանդության հաղթահարման արդյուավետության առումով շատ կարեւոր է նաեւ հիվանդի խնամքը: Հիվանդանացում միշտ չէ, որ հնարավոր է ցանկալի խնամք ապահավել: Բացի այդ, սենյակում փակված մնալը, հատկապես երբ հիվանդը շնչահեղձության նոպաներ է ունենում, հավելյալ սթրես է առաջացնում:

Հատկանշական մի դիտարկում՝ առաջին փուլում շատ էր համուհոտի զգացումը կորցնելու դեպքերը, բայց հիմա՝ այս փուլում այդ գանգատը ավելի քիչ է ներկայացվում:

Վարակի տարածման ակտիվ շրջանում *«Դիագնոստիկա»* բժշկական կենտրոնը աշխատում էր երկարացված ռեժիմով՝ օրական կատարելով մինչեւ 60-80 թոքերի տոմոգրաֆիկ հետազոտություն: Բուժանձնակազմն այդ փուլում աշխատել է գերծանրաբեռնված ու լարված, հաճախ առանց փոխարինողի՝ կատարելով իրաբամբ հերոսական աշխատանք: *«Սովորաբար, աշխատում ենք մինչեւ ժամը 16:00-ն, բայց այդ փուլում կար հավելյալ պահանջարկ, մարդիկ ունեին այդ հետազոտության կարիքը, դիմում էին եւ մենք չաշխատել չէինք կարող: Բուժանձնակազմը, իսկապես անձնուրաց աշխատանք է կատարել: Եղել են դեպքեր, երբ մեր բժիշկները, իրենք էլ լինելով վարակված՝ ջերմությամբ, ցավերի մեջ,կամ դեռ ամբողջությամբ չապաքինված, աշխատում էին: Մենք անձնակազմում ծանր թոքաբորբի դեպքեր ունեցանք՝ վարակվեցին եւ՛ բժիշկները, եւ՛ բուժքույրերը, բայց շատերը հիվանդությանը զուգահեռ ստիպված աշխատում էին, որովհետեւ փոխարինող անձնակազմ չկար: Հենց թոքերի համակարգչային տոմոգրաֆիայի բաժնի աշխատողների 90 տոկոսը վարակվեց: Ամառվա շոգին, հատուկ հանդերձանքով, դիմակներով, երբ մարդիկ դեռ անառողջ են՝ աշխատում էին քրտինքի մեջ կորած: Սա իսկապես տառապալից ու ծանր աշխատանք էր»*,- պատմում է Ռուզաննա Հակոբյանը: Նա նաեւ ցավով նշում է, որ կենտրոնի բուժանձնակազմի ներկայացուցիչներից նաեւ զոհ են ունեցել՝ բժիշկներից մեկը մահացել է կորոնավիրուսից:

Ըստ բժշկուհու՝ դժվար է հստակ ասել, թե մեկ անգամ վարակված անձը կրկնակի վարակվելուց որքանով է ապահովագրված: *«Դիագնոստիկա»* բժշկական կենտրոնում հետազոտվող հիվանդների մեջ կրկնակի վարակվածներ՝ մոտ 5-6 հոգի, եղել են: Նրանց մեջ եղել են նաեւ մարդիկ, որոնք վարակված են եղել 4-8 ամիս առաջ: Վիրուսը օրգանիզմում հակամարմիններ առաջացնում է, սակայն թե որքան է այն պահպանվում՝անհատական է՝ տարբեր մարդկանց մոտ տարբեր է: Կա կանխավարկած, թե վարակը որքան ավելի բարդացված ընթացք է ունեցել, այնքան ավելի շատ հակամարմիններ են առաջանում:

Պատվաստումներ համավարակի դեմ, *«Դիագնոստիկա»* բժշկական կենտրոնում դեռ չեն արվում, սակայն տնօրենը չի բացառում, որ մոտ ապագայում պոլիկլինիկական ծառայությունում կսկսեն նաեւ այդ գործընթացը: Ռ. Հակոբյանը վստահ է, որ սկզբնական շրջանում շատերը կխուսափեն եւ չեն ցանկանա պատվաստվել: Այս ընթացքում, սակայն, հասարակության վարքագծի որոշակի փոփոխություն, իհարկե, նկատվում է՝ օրինակ դիմակ կրելու կարգապահությունը նկատելիորեն բարձրացել է:

Ռուզաննա Հակոբյանը *«Դիագնոստիկա»* բժշկական կենտրոնը ղեկավարում է մոտ 9 տարի, մինչ այդ աշխատել է՝ որպես բժիշկ-ռադիոլոգ նույն կենտրոնում: Մասնագիտական աշխատանքի շուրջ 25 տարվա փորձը հուշում է. *«Բժիշկը երբեք չի կարողանում անջատվել գործից: Եթե բժիշկը բարդ դեպք ունի, նա չի կարող տանը հանգիստ քնել, քանի որ անընդհատ մտածում է հետեւանքի մասին՝ բուժման մասին: Անհնար է մտածել, որ աշխատանքդ ավարտվեց եւ դու ազատ ես»*: Նա համոզված շեշտում է, որ բժշկի մասնագիտությունը իր կյանքի մասնագիտությունն է՝ անկախ բարդություններից ու բարձր պատասխանատվությունից: Ցանկալի արդյունքը համարում է ճիշտ ախտորոշումը, որը բուժման առաջին նախապայմանն է:

Ռուզաննա Հակոբյանի ապրիլի 7-ի գլխավոր մաղթանքը խաղաղությունն է՝ մնացյալը ածանցվում է դրանից

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Սյունիքի մարզի «Կապանի հ. 8 միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 22-ին՝ ժամը 14:00-ին**, Սյունիքի մարզի Կապանի հ. 8 միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0285) 5-30-35, (091) 37-00-78 հեռախոսահամարներով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ ԿԳՄՍՆ «Արարատի պետական քոլեջ» ՊՈԱԿ-ի գրաֆիկական դիզայնի դասախոսի թափուր տեղի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 22-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ ԿԳՄՍՆ Արարատի պետական քոլեջում. հասցեն՝ Արարատի մարզ, ք.Արարատ, Խանջյան 67:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (0234) 4-41-01, (099) 97-27-47 հեռախոսահամարներով:

Դիմանկար

Ամենաածանր տեսարանը այրվող տներն էին...

կամավորական բժշկուհին համավարակի եւ պատերազմի մասին

Մարդիկ կան, որոնց վրա ամենավճռորոշ պահերին հենվում է հասարակությունը, ազգը, պետությունը:

Բժկուհի **Էմմա Եգանյանը** մադկային տեսակով հանրային հենարանի գործառույթ վերցնող է: Այդպիսին եղել է մասնագիտական գործունեության շուրջ 50 տարիների ընթացքում՝ անկախ հանգամանքից, աշխատել Հոկտեմբերյանի պոլիկլինիկայում, թե Երեւանի Կարմիր բլուրի պոլիկլինիկայում՝ որպես տեղամասային ընտանեկան բժիշկ:

Մարդկային իր այդ տեսակը 44-օրյա պատերազմի ընթացքում նրան հանգիստ չէր տալիս, եւ հասկացավ, որ Արցախ չմեկնել չի կարող:

Բժշկուհին, որպես կամավոր, մի քանի այլ գործընկերուհու հետ մեկնել էր Արցախ: Հասկանում էր, որ զենքով թշնամու դեմ պայքարելու համար բավարար հմտություններ չունի, այդ պատճառով էլ իրեն ի սկզբանե նպատակահարմար չէին գտնում ուղարկել պատերազմ, թեեւ առաջին իսկ օրվանից կամավորագրվել էր: *«Ի վերջո, կարողացա համոզել, որ վիրավոր զինվորներին օգնություն ցույց տալու հարցում մասնագիտորեն կարող եմ օգտակար լինել: Նոյեմբերի սկզբին վերջապես թույլտվություն ստացա եւ մեկնեցի: Այն, ինչ տեսա ու զգացի այդ օրերին, ուղղակի բառերով անպատմելի է,- ասում է նա: -Ամենասարսափելին այրվող տներն էին, երբ նոյեմբերի 9-ի՝ պատերազմի ավարտի մասին հայտարարության ստորագրումից մի քանի օր հետո վերադառնում էինք, ամբողջ ճանապարհի երկայնքով՝ աջ ու ձախ, տներ էին վառվում: Դուք հասկանո՞ւմ եք՝ հայ մարդն ինքն իր ձեռքով այրում էր իր տունը: Դա ամենավատ բանն էր, որ կարող էր լինել, դա իմ երբեւէ տեսած ամենադաժան, ծանր տեսարանն է»*,- պատմում է բժշկուհին: Հետո բառերը մի տեսակ դանդաղում են, զգացվում է, որ կոկորդ խեղդող արցունքները թույլ չեն տալիս շարունակել... Բժշկուհին խնդրում է, որ այդ թեմայով էլ չխոսենք:

Տասը որպեն մեկ ընդմիջվող զրույց

Բժշկուհի Էմմայի հետ մեր զրույցը 5-10 որպեն մեկ ընդմիջվում էր հիվանդների զանգերով. պատմում են իրենց վիճակի մասին՝ ջերմում են, թե ոչ, ինչքան է ճնշումը, ինչ ցավեր ունեն եւ այլն: *«Մեր աշխատանքի մեջ գիշեր ու ցերեկ չկա: Աշխատում ենք՝ առանց ժամային սահմանափակման: Բնականաբար, եթե մարդը վատառողջ է, պետք է անպայման զանգի բժշկին»*,- ընդմիջող զանգից հետո ժպտալով պարզաբանում է դոկտոր Էմման (զանգողները նրան այդպես են դիմում):

Անցած ողջ տարվա ընթացքում բազմաթիվ բժիշկների պես տիկին Էմման նույնպես գերծանրաբեռնված է աշխատել: *«Մենք սովորաբար հիվանդի մասին պատկերացում ենք կազմում նաեւ նրան տեսնելով: Այս իմաստով հիվանդների հետ հեռավար աշխատելը որոշ իմաստով նաեւ դժվար էր, որովհետեւ ճիշտ ախտորոշում տալը դժվար է: Իհարկե, բարդ դեպքերի պարագայում մենք կանչեր ենք գրանցում եւ տնային այցեր կատարում, բայց երբ հիվանդների քանակը շատ է, ֆիզիկապես հնարավոր չէ բոլորին պահել հսկողության տակ նույն հետեւողականությամբ: Ամեն դեպքում, հիվանդին գոնե մեկ անգամ տեսնելը պարտադիր է, հետո արդեն կարելի է նաեւ հեռախոսով շարունակել աշխատանքը»*,- նշում է բժշկուհին՝ հավելելով, որ հենց այս պահին իր հսկողության տակ միայն կորոնավիրուսով վարակված 15-17 հիվանդ կա, որոնց մեծ մասի մոտ վարակն արտահայտված է թոքաբորբով:

Համավարակի ակտիվ շրջանում եղել են օրեր, երբ օրական կորոնավիրուսով մինչեւ 22 հիվանդ է ունեցել՝ չհաշված մնացած հիվանդներին: Բոլորին զանգել, հեռախոսային կոնսուլտացիաներ անել, դեղեր նշանակելը դժվար է, նաեւ շատ պատասխանատու, որովհետեւ գործ ունես դեռեւս չբացահայտված եւ լիովին չուսումնասիրված վիրուսային հիվանդության հետ:

Անցյալ տարվա գարնանը եւ նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին վարակի տարածման տեմպերը շատ մեծ էին: Հիմա նույնպես համավարակի տարածման ակտիվությունը մեծ է, տարբերությունը թերեւս այն է, որ այժմ վարակը ավելի շատ բացասական ազդեցություն է թողնում միջին տարիքի անձանց վրա, հատկապես, եթե առկա են նաեւ ուղեկցող հիվանդություններ: *«Սովորաբար փորձում ենք ամբուլատոր բուժում կազմակերպել, բայց երբ վիճակը բարդ է լինում, անմիջապես ուղեգրում ենք հիվանդանոց»*,- պատմում է նա:

Պոլիկլինիկայում հիվանդների հետ տեսակցության համար մեկուսարաններ են ստեղծվել՝ ապահովության նկատառումներից ելնելով: *«Հիվանդին ընդունում ենք մեկուսարանում, նմուշառում ենք կատարում. եթե հաստատվում է, համապատասխան բուժում ենք նշանակում: Լինում են դեպքեր, երբ թեստի պատասխանը բացասական է լինում, սակայն հիվանդի ինքնազգացողությունը վատ է: Մենք, իհարկե, նման դեպքերում հիվանդի ախտանիշների վրա ենք հիմնվում, ոչ թե թեստի պատասխանի: Լինում է նաեւ հակառակը. թեստի պատասխանը դրական է, սակայն մարդն իրեն լավ է զգում՝ ո՛չ ջերմություն ունի, ո՛չ հազ, ո՛չ համուհոտի կորուստ, ո՛չ էլ այլ որեւէ ախտանիշ: Նման դեպքերում պարզապես խորհուրդ ենք տալիս 14 օր պարտադիր մեկուսանալ: Ամեն դեպքում, եթե թեստի պատասխանը դրական է, հիվանդի հետ կապը պահում ենք՝ նրան պահելով հսկողության տակ, որովհետեւ լինում են դեպքեր, երբ մարդը մի քանի օր որեւէ դժգոհություն չի ունենում, բայց հետո հանկարծ միանգամից ջերմությունը բարձրանում է»*:

Գործի ծանրությունից բժշկուհին ո՛չ նեղվում է, ո՛չ էլ դժգոհում: Ասում է՝ մեր գործն է, պետք է անենք: Այս վիրուսի հիմնական բարդությունը, ըստ մասնագետի, անոթների ախտահարումն է. *«Անոթային, հատկապես սիրտ-անոթային խնդիրներ ունեցողները, ծարպակալում, շաքարային դիաբետ եւ այլ ուղեկցող հիվանդություններով մարդիկ դժվարությամբ են հաղթահարում»*:

Ժամանակի ընթացքում կապվում ես հիվանդի հետ

Հարցին, թե որքանով է մեր հանրությունը պահպանում համավարակի կանոնները, բժշկուհին այսպես է պատասխանում. *«Մենք ծայրահեղությունների ազգ ենք. մեկը գտնում է, որ նման հիվանդություն ընդհանրապես գոյություն չունի, որոշ մասն էլ վախից հիստերիայի մեջ է ընկնում: Վախ ունեցող շերտն ավելի շատ է ենթարկվում բժշկին, քան նա, որ մատների արանքով է նայում այս ամենին: Բայց երկուսն էլ ապահովագրված չեն վարակվելուց»*,- ժպտալով ասում է բժշկուհին՝ ավելացնելով, որ ինքը եւս հիվանդությունը հաղթահարել է բավական դժվարությամբ: Չի կարողանում մտաբերել՝ որտեղ, ումից կամ ինչից է վարակվել: Հանգիստ է, որովհետեւ իր հետ նույն սենյակում աշխատող բուժքույրը չի վարակվել, իսկ դա նշանակում է, որ աշխատավայրում կանոնները ճշգրտորեն պահպանվել են:

Միգուցե հիվանդների՞ց եք վարակվել՝ հարցը բժշկուհու սրտով չէ: Ասում է՝ այդ հարցը չեմ սիրում, եւ բաց է անում փոքրիկ մասնագիտական գաղտնիք. *«Ժամանակի ընթացքում բժիշկը կապվում է հիվանդի հետ: Իսկ երբ կապվում ես հիվանդի հետ, սիրում ես մասնագիտությունդ, որը դառնում է կյանքիդ իմաստը: Եթե չսիրես, չես կարող աշխատել... Հետահայաց նայելով կյանքիս՝ հաստատպես կարող եմ ասել, որ եթե ամեն ինչ նորից սկսելու եւ ընտրելու հնարավորություն ունենայի, անպայման կրկին բժշկությունը կընտրեի, բայց գուցե ոչ թե թերապեւտի, այլ վիրաբույժի մասնագիտացումը: Վիրաբույժի մոտ մարդիկ գալիս են սուր դեպքերով, բայց իրենք բուժման արդյունքը ավելի արագ են տեսնում: Թերապեւտների մոտ այդպես չէ. մենք տարիներով բուժում ենք կատարում, եւ մեր գործի արդյունքը ավելի շատ հիվանդից է կախված: Եթե հիվանդը դեղերը պարտաճանաչորեն չի խմում, իրեն անկարգապահ է պահում, մեր աշխատանքը ցանկալի արդյունք չի տալիս»*,- ասում է նա:

Կնոջ պատասխանատվությունն ավելի մեծ է

Բնության մեջ եւ հանրային կյանքում կնոջ պատասխատանատվությունն ավելի մեծ է, քան տղամարդունը. *«Ես երբեք չեմ հանդիպել տղամարդու, որը գիտի, թե իր կինը որ ժամին ինչ դեղահաբեր է ընդունում: Բայց շատ եմ տեսել տղամարդկանց, որոնք չգիտեն, թե իրենք ինչ դեղեր են ընդունում. նրանք ընդունում են այն, ինչ տալիս է կինը: Հիվանդությունների մեծ մասի բուժման կարեւոր բաղադրիչներից մեկը սննդակարգն է, որի պահպանման պատասխանատվությունը եւս կնոջ կամ մոր վրա է դրված»*,-ասում է բժշկուհին՝ կանանց մաղթելով համբերություն եւ սեր:

Նրա կարծիքով՝ մարդիկ կան, որոնց համար հիվանդ լինելը բնավորություն է: Հիվանդությանը հաղթելու առաջին պայմանը հավատալն է, որ դու հիվանդությանը հաղթելու ես: Կարեւոր է նաեւ բժշկի ցուցումներին հետեւելու կարգապահությունը: Ցավոք, երբեմն հարեւանի ասածներին ավելի շատ են հավատում, քան բժշկի խորհրդին: *«Օրինակ՝ շատ լայն տարածում ունեցող բարձր ճնշման դեղերը այնքան շատ են ու բազմազան: Այն դեղը, որ մեկի համար օգտակար ու լավ է, մյուսին կարող է օգտակար չլինել, դրա համար այդ դեղը պետք է բժիշկը նշանակի, ոչ թե, օրինակ, հարեւանը խորհուրդ տա, կամ էլ դեղատան աշխատողը»*,- ասում է նա:

Հարց, որի պատասխանը չկա...

Բժշկուհի Էմման զգում է, որ հիմա բոլորը գերլարված են եւ համատարած սթրեսի մեջ Նախ համավարակը, հետո նաեւ պատերազմն անդառնալի հետք թողեցին մարդկանց նյարդային համակարգի վրա: *«Պատերազմը հատկապես շատ հզոր հարված էր. մենք սրա տակից դեռ երկար ժամանակ դուրս չենք գալու... Հանրության մեջ չարությունն ու ագրեսիան, որ հիմա շատացել է, նույնպես սթրեսի հետեւանք է»*,- կարծում է նա:

Տիկին Էմման չի կարողանում գտնել այն հարցի պատասխանը, թե ինչպես կարելի է օգնել պատերազմում որդի կորցրած մորը. *«Շատ դժվար հարց է, չեմ կարող պատասխանել... Երեւի ամեն մեկը յուրովի պետք է գտնի այդ ծանր հարցի պատասխանը: Ծնողը՝ մայրը, պետք է իր երեխային չկորցնի, պետք է երեխան ծնողին ճանապարհ դնի, ոչ թե հակառակը... Այն, ինչ եղավ, ուղղակի չպիտի լիներ: Մենք չպիտի տեսնեինք այն, ինչ տեսանք... Մեզանից յուրաքանչյուրն ինքն իր մեջ պետք է փնտրի ինչու հարցի պատասխանը եւ մեղքի սեփական բաժինը գտնելու կամք ունենա: Ես երբեք լացկան չեմ եղել, բայց այս պատերազմից հետո չեմ կարողանում ինձ զսպել: Միակ ցանկությունս կայուն խաղաղությունն է, որ ի վերջո հայ ազգը կարողանա մեջքն ուղղելու ուժ գտնել իր մեջ»*:

Կարինե ՄԱՆՈՒԿՅԱՆ

Լույսը ծագում է Արեւելքից

ԿԱԼԻԴԱՍԱ
(Հնդկաստան)

* *
*

Ոտից գլուխ իրենց իսկ ձեռքով իսպառ
կեղտոտված
Լույս մանուկները, անմեղ ժպիտից բացվող
բերանում՝ կոկոն ատամներ,
Քաղցր ու անուշ մի բլբլոցով, թոթով ու անկապ,
Ձգվում են գիրկը իրենց ծնողի՝ հիրավի
օրհնյալ:

ԴԱՇԻԴՈՐԺԻՅՆ ՆԱՅԱԳԴՈՐԺ
(Մոնղոլիա)

Մայրս

Գեղեցկուհի՛ աննման, բարուրել ես դու ինձ, մա՛յր
Եվ քո ճերմակ ձեռքերով օրորել ես դու ինձ մա՛յր:
Դու քո ձայնով դյութական մեղմ երգել ես ինձ համար
Եվ իմաստուն խոսքերով խրատել ես դու ինձ, մա՛յր:



ՄՈՍԼԵՀ ԷԴ-ԴԻՆ ՍԱԱԴԻ
(Իրան)

* *
*

Մի անգամ երիտասարդության հատուկ թեթեւամտությամբ ես գոռացի մորս վրա. նա, սիրտը կոտրած, մի անկյուն քաշվեց, լաց եղավ ու ասաց.
- Մի՞թե մանկությունդ մոռացել ես, որ հիմա այդպես հոխորտում ես:

Ի՜նչ լավ ասաց պառավ կինը իր սիրասուն զավակին,
Երբ առնական տեսավ նրան, փղի նման ահագին.
«Եթե դու քո մանկությունը լավ հիշեիր անցյալում,
Ինչպես փոքրիկ, անօգնական նստած էիր իմ գրկում,
Այսօր բնավ դու ինձ չէիր վիրավորի, իմ անգին,
Նրա համար, որ այժմ դու մարդառյուծ ես, ես՝ ծեր կին»:

* *
*

Թեկուզ կտրիճ էլ դառնաս
Ու բոլորին գետնով տաս,
Հորն ու մորդ համար դու
Միշտ երեխա կմնաս:

ՆԱՍԸՐ ԽՈՍՐՈՎ
(Իրան)

* *
*

Քո պատանեկան խենթությունները սանձի՛ր հանց գազան
Ու սիրով լսի՛ր քո ծնողների խոսքը սրբազան.
Միշտ հիշիր մորդ, որքա՜ն է անքուն քեզ օրոր ասել,
Հայրդ որքա՜ն է կոփել քո կամքը, տվել քեզ դասեր:

ՇԱՅԻԴ ԲԱԼԽԻ
(Իրան)

* *
*

Մայրն աշխարհում ամենքից շատ
Միշտ սիրում է իր զավակին,
Աստծուց խնդրում՝ իրե՛ն մահ տալ,
Հետո՛ միայն իր զավակին:

ՄԵՆ ՅԶՅԱՈ
(Չինաստան)

Մեկնող որդու երգը

(Ուղարկում եմ մորս՝ Լիյանից)

Ձեռքդդ առած ասեղ ու թել,
Իմ սիրելի՜, հարազա՜տ մայր,
Դու նոր շոր ես կարում տխուր,
Ճամփա մեկնող որդուդ համար:

Վախենում է սիրտդ լացող՝
Պանդուխտ որդիդ ուշ կդառնա.
Շոր ես կարում ամուր եւ պինդ,
Որ ճամփեքին լավ դիմանա:

Հնարավո՞ր բան է, մարդի՛կ,
Ձահել խոտի կանաչ սրտին
Վերադարձնել քնքշանքը այն,
Որ գարունն է տալիս միայն:

ԻՍԻԿԱՎԱ ԹԱՔՈՒԲՈՔՈՒ
(Ճապոնիա)

Թանկաներ

* *
*

Այս օրերին
Մայրս
Գյուղը հիշում է
Ավելի հաճախ...
Շեմքին աշուն է:

* *
*

Հոր նման
Դաժան է աշունը:
Մոր նման
Աշունը բարի -
Անօթեւան որդու համար:

* *
*

Փոքրիկ
Երկնագույն սափորից
Կաթ է լցնում
Դողդողացող մի ձեռք...
Սիրելի մի ձեռք:

* *
*

Երեկո է, անլույս, անկրակ...
Տեսնում եմ, ինչպես՝
Փայտերին հենված,
Հայրս ու մայրս
Ելնում են պատից:

ՄԱՅՈՒՈ ԲԱՍՅՈ
(Ճապոնիա)

Մեռած մորս վարսերի փունջը

Կհալվի ափերի մեջ իմ մերկ,-
Այնքան որ ջերմ են իմ արցունքները,-
Ճերմակ վարսերի եղյամը անդարձ:

ԲՈՒԹԱԼԻՆ ՉԽԻ ԼԵՅ
(Բիրմա)

Մայրական սեր

Ես քո դեմքն եմ տեսնում, մայրի՛կ,-
Գեղեցիկ է պայծառ լուսնից:
Դեմքն եմ տեսնում սիրելիիս,-
Գեղեցիկ է, քան վառ ծաղիկ:

Պատահում է, որ ծածկում են
Լուսինն ամպեր ալիքավոր.
Նա իր փայլը կորցնում է,
Երբ պատվում է մեգ-մշուշով:
Գունատվում է, անհետանում,
Լուռ թաքնվում մութ ամպերում,
Բայց ամպերն են երբ որ անցնում,
Կրկին շողում է խավարում:

Իսկ երբ ծաղիկն է թառամում,
Թերթիկները կնճռապատվում
Ու ընկնում են, գետին թափվում,
Նորից արդեն նա չի՛ ծաղկում:

ԱԲՈՒ ԱԲԴԱԼԼԱՀ ՄՈԵԶԶԻ
(Իրան)

* *
*

Երբ ծիծաղում է այն գեղեցկուհին լույսի պես մաքուր,
Մի տեղ օրհնանք է սփռում Աստըծո, մի տեղ՝ մշկաբույր,
Կարծես աստղերը գոչում են բարձր երկնակամարից.
«Ապրի այն մայրը, որ ծնել է քեզ ի պատկերի յուր»:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆ

Խրճիթում

Մանուկները գոռում, գոչում,
Լալիս էին աղեկեզ.
- Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

Հիվանդ նանը տեղի տակին
Ծանր տընքաց տըխրալի.
- Մենք հաց չունենք, ես ձեզ մատաղ,
Ապին գնաց հաց բերի:

- Չէ, խաբում ես, սուտլիկ նանի,
Չէ՞ դու ասիր՝ քարափին
Հենց որ զարկի շողքն արեւի
Հաց կըբերի մեր ապին:

Արեւն եկավ անց էլ կացավ,
Մենք սոված ենք դեռ էսպես.
Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

- Հաց չի գտել ձեր ապին դեռ,
Տուն չի գալի սեւերես.
Քիչ էլ կացեք, իմ բալիկներ,
Հիմի էնտեղ կերթամ ես...

Մի մեծ ապի կա երկնքում,
Նա շատ ունի էնտեղ հաց...
Նա ձեզ էնքան շատ է սիրո՞ւմ...
Նա չի թողնի ձեզ սոված...

Կերթամ էնտեղ նըրան կասեմ,
Որ սոված եք, իմ բալեք,
Ձեզ համար շա՞տ-շա՞տ հաց կուզեմ,
Որ դուք ուտեք, լաց չըլեք...

Մանուկները գոռում, գոչում,
Լալիս էին աղեկեզ.
- Նա՛նի, նա՛նի, հաց ենք ուզում,
Վե՛ր կաց, նա՛նի, հաց տուր մեզ:

Բայց չէր լսում էլ ականջը
Բազմաչարչար մայրիկի,
Աչքը փակեց նա հավիտյան
Գընաց, որ հաց ուղարկի:

ԳԵՂԱՄ ՍԱՐՅԱՆ

Կարոտ

Թռչեի՞ մտքով տուն,
Ուր իմ մայրն է արթուն
Սպասում իր որդուն
Անհանգիստ ու անքուն:

Տեսնեի այն առուն,
Որ ամեն մի գարուն
Ջրերով վարարուն
Կարկաչում է սարում:

Թեքվեի աղբյուրին,
Կարոտած պաղ ջրին,
Նրա զով համբույրին
Ու թավիշ մամուռին:

Լինեի հանդերում,
Ուր ծաղկունքն են բուրում,
Ուր մանուկ օրերում
Հովն էր ինձ համբուրում:

Ու հանդարտ, մեղմաբար
Հոտն իջներ սարից վար,
Գրկեի ես մի գառ,
Ու հոգիս մանկանար...

Եվ հոգնած ու նկուն
Երբ իջներ իրիկուն,
Մի ծառի շվաքում
Աչքերիս իջներ քուն...



ՀՈՎՀԱՆՆԵՍ ՇԻՐԱԶ

* * *

Հանեմ գանձերը հայոց լեռների,
Շաղ տամ բոլորը մորս ոտքի տակ՝
Ա՛խ, էլի քիչ է, ա՞խ, քիչ է էլի:

Շաղ տամ մարգարիտն՝ համայն ծովերի,
Ծաղիկների հետ, մորս ոտքի տակ՝
Ա՞խ, էլի քիչ է, ա՞խ, քիչ է էլի:

Ցած բերեմ բոլոր բույլերն աստղերի,
Ջույգ աչքերիս հետ ձգեմ ոտքի տակ՝
Մորս ոտքի տակ՝ ա՞խ, քիչ է էլի:

Եվ թեկուզ հանեմ իմ սիրտը բարի՝
Գառի պես զոհեմ մորս ոտքի տակ՝
Ա՛խ, էլի քիչ է, ա՞խ, քիչ է էլի:

Լոկ մայրն է այժմ խիղճն հայրենիքիս՝
Դարերի կյանքն էլ թե տաս մայրիկիս,
Աստված իմ, քիչ է, չէ՛, քիչ է էլի:

ԱՎԵՏԻՔ ԻՍԱՀԱԿՅԱՆ

* * *

Կըտեսնեմ ահա,- լուռ երեկոյին
Բարակ ծուխ կելնի իմ հոր օջախեն.
Եվ ուռիներս մարմանդ կօրորվին,
Ծղրիդը կերգե անտես խորշերեն...

Մեղմ ճրագի տակ նստել է տխուր
Ծերունի մայրս՝ մանկիկս գրկին.-
Մուշ-մուշ քնել է մանկիկս՝ անդորր,
Ու աղոթք կանե մայրիկս՝ լռին.-

«Ամենեն առաջ թո՛ղ ինքը հասնի
Ամեն հիվանդի, հեռո՛ւ ճամփորդի.
Ամենեն հետո թո՛ղ ինքը հասնի
Քե՛զ, իմ խեղճ որդի՛, իմ պանդուխտ որդի»:

Անո՞ւշ ծուխ կելնի իմ հոր օջախեն,
Մայրս կաղոթե՝ մանկիկս գրկին.
Ծղրիդը կերգե անտես խորշերեն
Եվ ուռիներս մարմանդ կօրորվին...

ՀԱՄՈ ՍԱՀՅԱՆ

* * *

Մորս արցունքի պարզությունն ունեք,
Գոհար կաթիլներ գարնան անձրեւի,
Դուք անհուն երկնի աչքից եք մաղում,
Երկինքը նրա դեմքն է երեւի:

Դուք մորս կաթի քաղցրությունն ունեք,
Ձմրուխտյա ջրեր մեր աղբյուրների,
Մայրս հանգչում է այս պայծառ հողում,
Նրա սրտից եք բխում երեւի:

Մորս ձեռքերի քնքշությունն ունեք,
Լեռներից թռած հովեր հարավի,
Դուք գիշեր-ցերեկ ինձ եք որոնում,
Մորս մոտից եք գալիս երեւի:

Մորս համբույրի ջերմությունն ունեք,
Անապակ շողեր ոսկյա արեւի,
Դուք իմ կարոտով վառվել աշխարհում,
Այդպես կրակ եք դարձել երեւի:

ԴԱՆԻԵԼ ՎԱՐՈՒԺԱՆ

Խաչբուռ

(կրճատումով)

Քեզ կը բերեմ, Մա՛յր, հունձքերուս նախընծան:
Ջոհագործե՛ սեղանիդ վրա՝ ուր, դարե՞ր,
Փեթակներուս մեղրամոմերը դեղձան
Լույս ու արցունք են հոսեր:

Դո՛ւն, սուրբ պաշտպան հայրենական հողերուս՝
Որոց տըվիր անմահությունը դրախտի.
Ծիլը ծաղիկ ըրիր, հույսը՝ Արշալույս,
Որ խըրճիթիս կը ժըպտի:

Դո՛ւն, Խաչբուռն այս, զոր իմ ձեռքով եմ հյուսեր,
Ընդունե՛, Մա՞յր: Բյուր հասկերուս մեջ ասոնք
Կը նազեին կույսերու պես շիկահեր,
Արեւահե՛ղց եւ ատո՛ք:

Մա՛յր, Խաչբուռն այս օրհնե՞. եւ տուր արտերուս
Ամառն՝ ոսկի, ինչպես գարունը՝ մարգրիտ.
Որքան ամբարքըս լի ըլլան՝ ջահեր լույս
Պիտի տան քու խորանիդ:

Ըրե այնպես՝ որ - նըման հի՞ն օրերուն-
Երբ դաշտերե դաշտ ժուռ գալու դուն ելլես՝
Փուշեր չըգա՞ն ոտքերուդ տակ՝ այլ սարսռուն
Կակաչներ՝ մեր սըրտին պես:

ՍԱՐՄԵՆ

Մայրական

Իմ երազներում միշտ դու ես, մա՛յր իմ,
Մերթ ուրախերես, մերթ լացակումած,
Գալիս՝ կանգնում ես դու իմ սնարին
Ու մրմնջալով խոսում ես կամաց:

Ասես աղոթք ես անում երկնքին.
Որ չարի ձեռքը չդիպչի որդուդ,
Որ չայրիանա կյանքում ոչ մի կին,
Ու էլ ոչ մի տուն չունենա պանդուխտ:

Այնպես քնքուշ ես ասում ու խոսում,
Նստում ես հետըս անուշ զրույցի:
Բայց ինչո՞ւ, ինչո՞ւ միայն երազում,
Երազում ես դու գալիս ինձ այցի...

ՌԱՉՄԻԿ ԴԱՎՈՅԱՆ

Մայր

Պատկերիդ հետ զրուցում եմ օրն ի բուն,
Ո՞վ կարող է ինձ ասել, թե դու չկաս.-
Արցունքներս քո ձեռքերով ես սրբում,
Քիչ է մնում իմ փոխարեն հեկեկաս:

Մա՛յր, ամեն օր ինձ մայրություն ես անում,
Բայց քանի՞ օր ես քո զավակը եղա,
Ցավն իմ հոգուց հառաչանքներ է քամում,
Հին հառաչանք՝ մա՛յր, քաղցր մա՛յր, քեզ մեղա:

Մեղա սրտիդ, արցունքներիդ, տանջանքիդ,
Մեղա մտքիդ ճառագումին անխափան,
Աղոթքներիդ, մրմունջներիդ ու ջանքիդ.-
Քեզանից դուրս հիմա չկա ոչ մի բան:

Որքան էլ որ ապրումներս խորանան,
Քո հայացքի շրջանակից եմ կախված,
Շրթունքներիս՝ քո խոսքերի մանանան,
Հոգիս՝ սիրուդ լռության մեջ թաթախված:

ԴԱՅԱՆԱ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Մեր բոլորի մայրը

«Նա կանաչ ծառ է՝ դանդա՜ղ բռնկվող.
Բայց եթե վառվեց - մոխրակույտ կանի
Աշխա՛րհը արար... Թեեւ մեծ մասամբ
Մա՜յր է, դուստր ու քույր...»:

Այս տողերը ես գրքի՜ց եմ քաղել.
Քանզի հայերը
Չե՜ն գովում իրենց կանանց, ինչպես որ
Ոչ ոք չի՜ գովում այն գա՛նձը,
Որ չի ցանկանա կորցընե՜լ...
«Չկա մեկը, որ մորը չսիրի, բայց հա՛յն է միայն,
Որը սիրում է նաեւ... զոքանչի՜ն...».
«Հայ կանա՜յք...
Նրանք ծրագրված են ի ծնե, վերուստ,
Որպես նահատակ... Ուշադի՛ր նայիր
Եվ հայ կնոջ մեջ դու կո՜ւյս կտեսնես
Ու միանձնուհի... Նայիր վերըստին,-
Եվ կհանդիպես կատաղի վագրի՛...
Չկա՛ այնպիսի անձնազոհություն,
Ինքնուրացում ու նվիրվածություն,
Որ բաժին չընկնե՜ր հայ պարկեշտ կանանց...»:
Կասկածո՞ւմ եք դուք,
Չե՞ք կարող զատել կեղծիքը ճշտից-
«Նույն խարբերդի՛ց են սերում աշխարհի
Ամենի՜ց համեստ հարս-աղջիկները
Եվ ամենից քա՛ջ ու կռվո՛ղ կանայք...»:
Իրա՜վ եմ ասում.
Հայաստանի՜ց է եկել իմ տատը՝
Իմ մոր ծեր մա՛յրը,
Սակայն Ադամ ու Եվայից ծնված
Ամե՛ն արարած
Կհաստատի ա՛յն
Ինչ ձեզ ասո՜ւմ եմ...

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

* * *

Սյուն լուսո եւ ամպ հովանի, սուրբ կույս,
Որ ցողեցեր ի մեզ զցողն երկնային,
զՔեզ բարեբանեմք, Աստվածածին եւ կույս:

Անկեզ մորենի եւ սերովբե հողեղեն, սուրբ կույս,
Քանզի պտուղն կենաց ի քեզ տվավ մեզ,
զՔեզ բարեբանեմք, Աստվածածին եւ կույս:

Անիծից լուծիչ ու քավիչ մեղաց, սուրբ կույս,
Որ զանտանելին էից ի գիրկս քո բարձեր,
զՔեզ բարեբանեմք, Աստվածածին եւ կույս:

ՀՈՎԻԿ ՀՈՎԵՅԱՆ

Իմ հին դուդուկ

Մորս սիրտը՝ կարմիր կաքավ,
Բույն է հյուսել երգիդ մեջ,
Իմ հին դուդուկ, տարին անցավ,
Մայրս արթուն՝ քնիդ մեջ:
Մորս սիրտը՝ մի նավ մոլոր
Ծովիդ խորքում հողմահար,
Իմ հին դուդուկ, զգույշ երգիր,
Մորս սիրտը չընկնի վար:

ՄԱՐՈ ՄԱՐԳԱՐՅԱՆ

* * *

Դու անհնար,
Դու անհատնում,
Կայծկլտալով այրվող անվերջ
Մայրական սեր.
Աչքերդ փակ դու լուռ վատնում,
Բոլոր չափ ու սահմանից դուրս,
Սրտից խորունկ, ուժերից վեր:
Քեզ խանդավառ
Խոսքեր կասեն.
Կյանք է՝
Մի օր կթերանան,
Կյանք է՝
Մի օր կմոռանան,
Մի օր գովք ու գորով դառած՝
Քեզ բոլորից վեր կդասեն:
Միեւնույն է՝
Ուսիդ բեռը լոկ դու տանող,
Միեւնույն է՝
Դու ամենքին
Սիրով միայն
Պատասխանող.
Մանկան շրթից
Դուրս թռած դու՝
Առաջին բառ.
Մահացողի աչքերի մեջ
Վերջին պատկեր.
Համառ,
Հզոր,
Ամենազոր՝
Մայրական սիրտ,
Մայրական սեր:

ՀԱՄԼԵՏ ԿԱՐՃԻԿՅԱՆ

* * *

Մորս՝ Աշխենին

Մայրս արցունքի զրնգուն կաթիլ,
Որ Աստծո աչքից ծորացել է ցած,
Սակայն երբեւէ չի ընկել գետին
Ու մնացել է երկնքից կախված...

Եվ երբ նայում եմ երկնքին կապույտ,
Թվում է, թե նա այն զանգն է միակ,
Որ ղողանջում է երազներ անսուտ՝
Երկինք ու Երկիր կապելով իրար...

Ու օրերի հետ, տարիների հետ,
Երբ դառնում են իմ աւերը անթիվ,
Ժպտում է ցավով ու երանավետ,
Մայրս՝ Աստըծո արցունքի կաթիլ:

Լույսն ընթանում է դեպի Արեւմուտք

ՍԱՖՈ
(Հունաստան)

* *
*

Ունեմ չքնաղ մի դստրիկ, ասես լինի իր տեսքով
Նա մի ծաղիկ ոսկեթերթ. Կլաիսն է դա իմ անգին,
Չեմ փոխի ես նրա հետ անգամ հրաշք Լիդիան ողջ...

ՈՒԻԼՅԱՄ ՇԵՔՍՊԻՐ
(Անգլիա)

Սոնետ

Երբ ժամացույցն անցավոր կյանքի հաշի՛վն է անում,
Եվ պայծառ օրը՝ սուզվում խավարի մեջ գիշերի,
Երբ մանուշակն աչքիս դեմ թառամո՜ւմ է, չորանո՜ւմ,
Արծաթն՝ իր գույնը խառնում փայլուն ու սեւ վարսերին.
Երբ մերկանում է քամուց աշնան այն ծա՜ռը դեղնած,
Որ շոգ ամռանը հոտի հովանի՜ն է ստվերոտ.
Որպես խոտի խուրձ ու դեզ, որպես օրան ու ծղոտ.
Սիրտս կծկվո՜ւմ է, ցավո՜ւմ, որ... անցողիկ ես եւ դո՛ւ,
Գեղեցկությո՛ւնը քո թարմ, քո հմա՜յքը տենչալի.-
Չէ՞ որ կյանքում ամեն բան տեղը զիջո՜ւմ է տրտում,
Անդարձ քաշվում-հեռանում, երբ ուրիշնե՛րն են գալիս...

Քո միակ հո՛ւյսը՝ ընդդեմ ժամանակի ու մահվան,
Նրանց անզոր դարձնող քո երեխա՜ն է միայն:

ՅՈՀԱՆ ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈԹԵ
(Գերմանիա)

* *
*

(«Ֆաուստ» ողբերգությունից)

Պատրանք է ունայն
Կարճ կյանքը երկրի,
Երկինքն է միայն
Օրրան իղձերի:
Այստե՛ղ ենք հասնում
Մեր երազածին,
Մեզ վեր է հանում
Հավերժ կանացին:

ԴԱՆԹԵ ԱԼԻԳԻԵՐԻ
(Իտալիա)

* *
*

(«Աստվածային կատակերգություն» պոեմից)

Ո՛վ մայր կուսան եւ դուստր քո զավակի,
Խոնարհ ու վեհ քան ամենայն արարած,
Սահմանանիշ հավերժական խորհուրդի:

Դու մարդկային մեր բնությունը այնքան
Ազնվացրիր, որ ստեղծիչը նրա
Դարձավ նրա ստեղծյալը սոսկական:

Քո արգանդում սերը նորից բորբոքվեց,
Որի հրով խաղաղության մեջ հավերժ
Դրախտային այս վարդն այսպես բողբոջեց:

Աստ մեզ համար բոցավառ ջահ ես սիրո,
Իսկ աշխարհում, մահկանացու մարդկանց մեջ,
Դու անսպառ ու ջինջ աղբյուր ես հուսո:

Ո՛վ Տիրամայր, այնքան մեծ ես ու բարի,
Որ առանց քեզ շնորհ հայցել՝ կլիներ
Ինչպես թռչել ուզել առանց թեւերի:

Դու ոչ միայն քո բարությամբ օգնում ես
Քեզ դիմողին, այլ շատ հաճախ ինքնակամ
Գոհացնում ես կարոտյալի հայցը հեզ:

Դու գթություն, ողորմություն ես համակ,
Դու վեհանձն ես, եւ քո մեջ է խտացած
Էակների բարությունը բովանդակ...:

ՖՐԻԴՐԻԽ ՇԻԼԼԵՐ
(Գերմանիա)

Աստվածամայրը

(«Օռլեանի կույսը» ողբերգությունից)

Տեսնո՞ւմ եք օդում
Այն ծիածանը: Բաց են երկնքի
Ոսկե դռները: Հրեշտակները շուրջ՝
Փառավորապես կանգնած է այնտեղ
Աստվածամայրը, հավիտենական
Մանուկը գրկում: Սիրով ժպտալով՝
Մեկնում է նա ինձ յուր բազուկները:
Այս ի՞նչ եմ զգում... Ինձ բարձրացնում են
Թեթեւ ամպերը...Վե՜ր-վե՜ր... Երկիրը
Մնում է ետեւ... Ցավն է կարճատեւ,
Ուրախությունը՝ հավիտենական:





ՌԱՅՆԵՐ ՄԱՐԻԱ ՌԻԼԿԵ
(Ավստրիա)

Մանկությունից

Խավարն է իշխում սենյակում միայն,
ուր նստած էր տղան՝ մթով ծածկված:
Երբ մայրը եկավ երազի նման,
լուռ պահարանում մի բաժակ զնգաց:

Տունը ոնց փոխվեց հենց մայրիկն եկավ,
համբուրեց որդուն. ահ, այստե՞ղ ես դու...
Դաշնամուրն ահա պատի տակ լքված,
երեկոները ինչքան էր մայրը երգում,
երգի մեջ սուզում անուշ փոքրիկին:

Նա նստած էր լուռ: Հայացքը հառած
մատանուց սեղմված մայրիկի ձեռքին-
Մայրն ասես գնաց ձյունները դեպի
ստեղներով ճերմակ հեռացավ, գնաց:

ՋՈՐՋ ԳՈՐԴՈՆ ԲԱՅՐՈՆ
(Անգլիա)

* *
*

(«Դոն Ժուան» պոեմից)

Մայրն ամենքից շատ որդուն է սիրում,
Մարդն է ենթակա այս մեծ բնազդին,
Բնազդը վագրի ժանիքն է սրում՝
Երբ մեկն ուզում է մոտենալ ձագին:
Ի՜նչ քաղցր է մանկան ճիչը մսուրում,
Մայրը այդ ճիչն է սիրում կաթոգին,
Այդ զգացմունքը երկնել է Աստված,
Եվ նա մեծ պատճառ ունի անկասկած:

5-8 էջերի ծաղկաքաղն արված է 2001թ. «Ջանգակ-97» հրատարակչությամբ լույս տեսած՝ Սամվել Իսկանդարյանի կազմած «Աշխարհի պոետները մոր մասին» ժողովածուից:

ՎԻԿՏՈՐ ՀՅՈՒԳՈ
(Ֆրանսիա)

Իմ մանկությունը

Տուն դարձա հանկարծ ես թափառ կյանքից,
Ծագեցի ինչպես շողը մութ ամպից:
Երազում էի, թե գտնեմ պիտի աղբյուրն այն կախարդ,
Ուր ջուրն է զնգում, հնչում անդադար,
Նվիրում հանգիստ եւ արբեցնում ինձ:

Իմ հուր սրտի մեջ հարություն առավ անցյալը կրկին,
Այնպե՜ս կամացուկ թեւածեց դարձյալ երգն իմ շրթունքին,
Եվ քայլում էի, եւ ինձ մայրական սերն էր պահպանում,
Արցունքի միջից ժպտում, կրկնում էր մայրը իմ անգին.
«Այդ դիցանուշն է հետը զրուցում»:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (19 դասաժամ), հայոց եկեղեցու պատմության (3), հասարակագիտության (3), հայրենագիտության (1), պատմության (8), քիմիայի (4), կենսաբանության (4), ֆիզիկայի (5), մաթեմատիկայի (9) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 22-ին՝ ժամը 14:00-ին**, ՀՀ Գեղարքունիքի մարզի Ծափաթաղ գյուղի Հենրիկ Աբրահամյանի անվան միջնակարգ դպրոցում:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 63-48-74 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ «Շիրակի մարզի Ծաղկուտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի քիմիայի (6 դասաժամ), կենսաբանության (6), անգլերենի (12), ռուսաց լեզվի (18) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից եւ աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձեւ 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաեւ զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաս-տաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ եւ բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչեւ փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել եւ համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության հրապարակման օրվանից **մինչեւ ապրիլի 20-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **ապրիլի 22-ին՝ ժամը 13:00-ին**, ՀՀ Շիրակի մարզի Ծաղկուտի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Շիրակի մարզ, գ. Ծաղկուտ, 2-րդ փողոց, շենք 3:

Տեղեկությունների համար զանգահարել՝ (094) 13-56-61 հեռախոսահամարով:

Հայտարարություն

Հայտարարվում է մրցույթ՝ ՀՀ Լոռու մարզի «Տաշիրի հ. 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տեխնոլոգիայի (11 դասաժամ, տղաների խումբ), մաթեմատիկայի (28), ֆիզիկայի (16) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը եւ յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

- դիմում (Ձեւ 1), մեկ լուսանկար 3x4 չափի,
